

Մ Ա Ռ Ջ Ի Կ ԲՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԵ. ՏԱՐԻ, 2006, ԹԻԻ 5-6 (287-288) VOL. XXV N°5-6 السنة الخامسة والعشرون العدد الخامس - السادس



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՐԱԿԻ ԹԱԳԱԽՈՐ





**«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻՒԼ ՆՈՒՒՐՈՒԱԾ՝
ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ**

ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒՐՖԱԼԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

«Մարզիկ»ի այս քիֆն մամուլի յանձնումի պահուն, Լուս Անճելյուսի մէջ իր մահկանացուն կնքեց ազգային-կուսակցական, կրթական-մրաւորական գործիչ, վաստակատու Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Անդրանիկ Ուրֆալեանը, որուն անունը սերտորէն կապուած կը մնայ արեւնի Մերջատու Արեւելքի Շրջանային Վարչութեան: Ամբողջ րասնամեակ մը, 1960-1969, եղբ. Անդրանիկ արեւնադպիրի պաշտօնով մաս կազմած է յիշեալ վարչութեան, իր բոլորանուէր մասնակցութիւնը բերելով Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մասնաճիւղերու ղեկավարման աշխատանքին:



Եղբոր մահուան առիթով, իբրեւ յիշարակի ծաղկեպսակ, «Մարզիկ» կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի նուիրուած անոր մրաժնումներէն անբառաւ փունջ մը:

Երբ յետադարձ ակնարկով մը կը փորձենք կշռադատել Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը, անվարան կը հաստատենք, որ Հ.Մ.Ը.Մ.ը լրիւ կերպով գործադրած է ու կը շարունակէ գործադրել անոր հիմնադիրներուն կրկնակի նպատակները.- ա) հայ ժողովուրդի պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը կապել մարզական գործունէութեան եւ բ) մանաւանդ նոյն այդ միութեան միջոցաւ ազգապահպանման մեր ընդհանուր ճիգերուն նպաստել՝ հայութեան մէջ հայ ծնած ըլլալու եւ հայ ապրելու հպարտութիւնը ներմուծելով՝ տժգունող, իր ինքնութենէն պարտադրաբար պարպուող մեր բազմութիւններուն:

Չոյգ այս առաջադրանքներով հիմնադրուած Հ.Մ.Ը.Մ.ը, այսօր, իր սփիւռս աշխարհի տարածուած մեր տարագիր բեկորներուն մտքին ու հոգիին մէջ դրոշմուած է անջնջելիօրէն:

Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր իրագործումներուն բարոյական ու նիւթական կռուանը մնաց միշտ մեր ժողովուրդին սիրտն ու հոգին, քրտինքն ու քսակը, առանց պետական որեւէ օժանդակութեան: Եւ հոս պէտք է փնտռել նաեւ Հ.Մ.Ը.Մ.-հայութիւն կապուածութեան գերագոյն գաղտնիքը: Ժողովուրդը գուրգուրաց Հ.Մ.Ը.Մ.ի վրայ եւ պահանջեց միշտ հպարտութիւն ներշնչող արարքներ՝ Հ.Մ.Ը.Մ.էն:

Հ.Մ.Ը.Մ.ը ներկայ ժամանակներու հայ իրականութեան մէջ կը շարունակէ մնալ իբրեւ մեր գաղութները իրարու յօդող յօրաւորագոյն կապմակերպութիւն, իր ամէն տեսակի գործունէութիւններով ու խոյանքներով, նուիրեալներու փաղանգներով:



ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجلّة رياضية شهرية تصدرها جمعية المومتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԵ. ՏԱՐԻ, 2006, ԹԻԻ 5-6 (287-288)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱՍՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՒՆ
 Տոքթ. Միսաք Արզումանեան,
 Պետրոս Շենմեսեան, Ա.Ա.,
 Սայրի Լատոյեան
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Հանուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Յուշեր 9
- Դաստիարակչական 13
- Անտիպներ 14
- Պատմութեան Համար 16
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 22



28



25

ԲԱԺԻՆՆԵՐ

- Հայաստան՝ Ճատրակի Թագաւոր 3
- Մարզական Գիտութիւն 20
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատաւաճառի սակն է 3000 լ.ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 և Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 և Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



ՆՄԿԴԹՆՀԿԵՂԻՆ

ՀՆՈՐՀԱԿԱՈՒԹԻՒՆ

Բառերուն ամենէն պարզը, ամենէն գրաւիչն ու ազնիւը, որ իր մէջ կը խտացնէ մարդկային բազմաթիւ առաքինութիւններ:

Նուէրի մը, բարիքի մը կամ ծառայութեան մը փոխարէն, ի՞նչ արժէք ունի շնորհակալութիւնը այն մարդուն համար, որ գիտակցութիւնը ունի «Շնորհակալ եմ» ըսելու:

Սակայն, կ'արժէ հարց տալ, թէ ի՞նչ կ'ըլլայ շնորհակալութեան ձգած տրպաւորութիւնը ընդունողին եւ անկէ զրկուողին վրայ:

Շնորհակալութիւնը ինքնաբերիկ արտայայտութիւն մըն է, որ կ'արտայայտէ երախտաւոր մարդուն հոգիին ու բարոյականին մեծութիւնը:

Տարբերութիւն չ'ընենք, թէ բարիքը մեծ է կամ փոքր, կարեւոր է որ բարեգործը ստանայ իր բարոյական վարձատրութիւնը, որն է՝ շնորհակալութիւն:

Շնորհակալութիւնը խորքով ու հրապոյրով բառ մըն է, որ դիրքին կ'արտասանուի եւ դիրքին կը ստացուի՝ փոխադարձ գոհունակութեամբ: Տուողին եւ ստացողին միջեւ ան կը ստեղծէ վստահութեան անքակտելի կապ մը:

Մագնիսական է իր ուժը: Ան կը քաջալերէ բարեգործութիւնը, կ'ազնուացնէ նկարագիրը, կը բիրեղացնէ սիրոյ եւ խանդաղատանքի զգացումները եւ հոգին ամենէն դժուար զոհողութիւններու դիմաց կը դարձնէ գերզգայուն:

Շնորհակալութիւնը կը ցոլացնէ մարդկային ամենէն բարձր առաքինութիւնը, որ կը կոչուի երախտագիտութիւն: Իր բարոյական ծանրութիւնը եթէ նժարի վրայ դրուի, անպայման որ ան կը հաւասարի մարդկային

բոլոր առաքինութիւններու համագումարին:

Անկեղծութեամբ արտասանուած շնորհակալական խօսք մը, երախտագէտ սրտէ բխած, ուժ եւ խրախոյս կու տայ դժբախտութեան եւ դժուարութեան դէմ պայքարող մարդոց:

Ոչ մէկ բան շնորհակալութեան եւ երախտագիտութեան զգացումները կը խեղդէ մարդոց հոգիներուն մէջ, որքան ապերախտութիւնը՝ իր ժանիքաւոր ձեռքերով:

Ապերախտ մարդը ամբողջ կեանքին ընթացքին անզգամութիւն կը շնչէ եւ սիրոյ թթուածինի պակասէն կը տառապի:

Դժբախտաբար, շատ կան եսասիրութենէ տարուած մարդիկ, որոնք չեն գիտեր ու չեն սորված շնորհակալ ըլլալ ստացուած բարիքի մը կամ ծառայութեան մը փոխարէն: Անտարբերութիւնը եւ արհամարհանքը ուղեցոյց ըրած են իրենց մեծամիտ մտեցումներուն եւ ամենուրեք միայն իրենց շուքը կը տեսնեն, իրենց հասակին կրկնապատիկ մեծութեամբ:

Որքան երախտագէտ մարդը ցոյց տայ իր իմացական եւ հոգեկան հարըտութիւնը, այնքան ապերախտութիւնը կը դրսեւորէ իր մտային ու բարոյական սնանկութիւնը:

Վստահութիւնը՝ երախտագիտութեան եւ շնորհակալութեան, եւ նսեմութիւնը՝ ապերախտութեան, անկամբջելի երկու յատկանիշներ են մարդկային բնութեան: Մէկը շուշաններ կը ծաղկեցնէ սրտերու մէջ, իսկ միւսը կը խամրեցնէ վանոնք: Մէկը ընկերային յարաբերութիւններու մէջ ներդաշնակ գործակցութիւն կը ստեղծէ, միւսը՝ պառակտում եւ անտարբերութիւն, որուն օրինակները այնքա՛ն շատ են մեր կեանքին մէջ:

ՀԱ - ՅԱՄ - ՏԱՂ Ա - ԽՈՂՅ - ԵԱՂ



Երկու տարին անգամ մը տեղի ունեցող ճայրակի ողիմպիականները, ազնի մրցակցութեան կողքին, կը ծառայեն ճշդելու իմաստութեան խաղին աշխարհի լուսազոյն ներկայացուցիչը:

4 Յունիս 2006ին, Հայաստան դարչաւ այն փոքրաթիւ երկիրներէն մէկը, որ արժանատրապէս նուաճեց այդ ներկայացուցչութեան տիրոջն եւ երկու տարուան համար դարչաւ ճայրակի աշխարհի թագաւոր:

Պատմական իրագործումը կատարուեցաւ ճատրակի 37րդ ողիմպիականին, 21 Մայիսէն 4 Յունիս 2006ին, երբ 13 անպարտելի հանգրուաններէ ետք, Հայաստանի տղոց հաւաքականը Խտալիոյ Թորինո քաղաքին մէջ բարձրացուց աշխարհի ախոյեանու-

թեան բաժակը:

Վերջին հանգրուանին միայն մէկ կէտի կարիքը ունեցող հաւաքականը Հունգարիոյ հետ արձանագրեց 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը եւ 36 կէտով տիրացաւ տիտղոսին, իր ետին ձգելով 109 հաւաքականներ:

Վերջին հանգրուանի մրցումին, Հա-

յաստանի չորս վարպետները՝ Լեւոն Արոնեան, Վլատիմիր Յակոբեան, Կարէն Ասրեան եւ Գաբրիէլ Սարգսեան հաւասարութիւններ արձանագրեցին Զոլթան Ալմասիի, Զոլթան Կիէմետի, Ֆերէնք Պերքէսի եւ Սասպա Պալոկի հետ:

Այս իրագործումը մարզական դէ-



տերու կողմէ նկատուեցաւ աննախընթաց յաջողութիւն՝ ոչ միայն հայկական ճատրակին, այլեւ՝ հայութեան եւ մարզական պատմութեան համար:

Նախապէս, Հայաստանի հաւաքականը երեք անգամ (1992, 2002, 2004) չհասած էր ողիմպիականի պրոնզէ մետալը, իսկ անգամ մըն ալ կէս կէտի տարբերութեամբ հանդիսացած էր չորրորդ (1996), սակայն ողիմպիականի ոսկին կը մնար այնքան ցանկալի, սակայն չիրականացած երազ:

Երազը իրականութեան վերածեցին Լեւոն Արոնեան, Վլադիմիր Յակոբեան, Կարէն Ասրեան, Գաբրիէլ Սարգսեան, Սմբատ Լպոտեան եւ Արտաշէս Մինասեան, մարզիչներ ունենալով Տիգրան Նալբանտեանը եւ Արշակ Պետրոսեանը:

Գաբրիէլ Սարգսեանի արձանագրած արդիւնքները նկատուեցան մարզական սխրանք, որովհետեւ առաւելագոյն 13

կէտերէն ան ապահովեց 10 կէտ: Վլադիմիր Յակոբեան առաւելագոյն 12 կէտերէն ապահովեց 9 կէտ:

Ստորեւ՝ 13 հանգրուաններու արդիւնքները-

Հայաստան - Վենեզուելլա	3-1
Նիկերիա - Հայաստան	0.5-3.5
Հայաստան - Դանիա	3-1
Հայաստան - Նորվեգիա	4-0
Ռուսիա - Հայաստան	2-2
Հայաստան - Ուզպէքիստան	2.5-1.5
Հորանտա - Հայաստան	1-3
Քուպա - Հայաստան	1-3
Ուքրանիա - Հայաստան	1.5-2.5
Հայաստան - Զինաստան	2.5-1.5
Հայաստան - Զեխիա	3-1
Ֆրանսա - Հայաստան	2-2
Հայաստան - Հունգարիա	2-2

ՏՂՈՑ ԼԱՒԱԳՈՅՆ 20 ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԸ

	ԿԷՏ
1. ՀԱՅԱՍՏԱՆ	36
2. Չինաստան	34
3. Մ. Նահանգներ	33
4. Իսրայէլ	33
5. Հունգարիա	32.5
6. Ռուսիա	32
7. Ֆրանսա	32
8. Ուքրանիա	32
9. Պուլկարիա	32
10. Սպանիա	32
11. Չեխիա	31
12. Հոլանտա	31
13. Ուզպէքիստան	31
14. Վրաստան	31
15. Գերմանիա	31
16. Քուպա	30.5
17. Շուէտ	30.5
18. Մոլտաւիա	30.5
19. Անգլիա	30.5
20. Դանիա	30



Երեւան վերադարձին, Հայաստանի հաւաքականը արժանացաւ պետական ու ժողովրդային փառաւոր ընդունելութեան: «Ձուարթնոց» օդակայանին մէջ, հայրենի վարպետները դիմաւորեցին վարչապետ Անդրանիկ Մարգարեան, կառավարութեան անդամներ եւ հազարաւոր հայորդիներ: ումբի մարզիչ Արշակ Պետրոսեան ըսաւ. «Մենք ապրեցանք պատմական օր մը: Շատ ուրախ ենք, որ կարողացանք այդ բարձունքը հասնիլ»:

Իր կարգին, «Ազատութիւն» հրապարակին վրայ հաւաքուած հազարաւոր հայորդիներուն խօսք ուղղելով, ճատրակի ֆետերասիոնի նախագահ եւ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան ըսաւ. «Ասիկա առաջին լուրջ յաղթանակն է. մեր յաղթանակները տակաւին առջեւն են»:

Այս առիթով, նախագահ Ռոպէրթ Քոչարեան «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրեց ախոյեան վարպետներն ու մարզիչները: Պարգեւատրու-

ման պահուն Քոչարեան ըսաւ, որ «մեր նատրակի վարպետներու խաղին ուշի ուշով կը հետեւէր ամբողջ Հայաստանը, եւ ասիկա յաղթանակ մըն է, որ այս օրերուն իրապէս ոգեւորած է համայն հայութիւնը»:

Հայաստանի կառավարութեան որոշումով, հայրենի հաւաքականի անդամներուն շնորհուեցան 7.5 միլիոն դրամի (18 հազար տոլարի) նիւթական պարգեւներ:

ԱՂՋԿԱՆՑ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Աղջկանց խմբային ախոյեանութեան մրցումներուն, Հայաստան 108 երկիրներու շարքին, 24 կէտով գրաւեց ընդհանուր դասաւորման 8րդ դիրքը: Ախոյեան հանդիսացաւ Ուքրանիա՝ 29.5 կէտով:

Հայրենի աղջկանց հաւաքականը ներկայացուցին չորս վարպետուհիներ՝ Լիլիթ Մկրտչեան, Էլինա Դանիէլեան, Նեյի Աղինեան եւ Սիրանոյշ Անդրէասեան:

ԱՂՋԿԱՆՑ ԼԱՒԱԳՈՅՆ 10 ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԸ

	ԿԷՏ
1. Ուքրանիա	29.5
2. Ռուսիա	28
3. Չինաստան	27.5
4. Մ. Նահանգներ	24.5
5. Հունգարիա	24.5
6. Վրաստան	24.5
7. Հոլանտա	24.5
8. ՀԱՅԱՍՏԱՆ	24
9. Սլովենիա	24
10. Չեխիա	24

13րդ եւ վերջին հանգրուանին, Հայաստան 1.5-1.5 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց ախոյեան Ուքրանիոյ հետ:

Ստորեւ՝ 13 հանգրուաններու արդիւնքները:-
Հայաստան-Դանիա 3-0

■ Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.

■ 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.

■ Individualized and personal service, 24 hour reception and room service

■ Bar

Europe Hotel

Feel at home, away from home...

Reservations Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



1991-2006

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՏՐԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի անկախության տիրացումէն ետք, ճատրակի տղոց ու աղջկանց հաւաքականները կ'արձանագրեն բազմաթիւ յաջողութիւններ: Այսպէս,

1992- ճատրակի 32րդ ողիմպիականին, տղոց հաւաքականը կը հանդիսանայ երրորդ:

1994- աշխարհի խմբային ախոյեանութեան Հայաստան կը գրաւէ չորրորդ դիրքը:

1995- հայրենի «Երեւան» ակումբը կը դառնայ Եւրոպայի ախոյեան ակումբներու ախոյեան:

1996- ճատրակի 33րդ ողիմպիականին, Երեւանի մէջ, տղոց հաւաքականը 0.5 կէտի տարբերութեամբ երրորդ տեղը կը զիջի Մ. Նահանգներու հաւաքականին:

1997- աշխարհի խմբային ախոյեանութեան Հայաստան կը գրաւէ երրորդ դիրքը:

1998- ճատրակի պատանիներու ողիմպիականին, Պոլսոյ մէջ, հայրենի պատանիներու խումբը՝ Լեւոն Արոնեան, Գաբրիէլ Սարգսեան, Վլադիմիր Յակոբեան եւ Տիգրան Լեւոնի Պետրոսեան կը հանդիսանայ առաջին:

1999- Հայաստան կը տիրանայ Եւրոպայի ախոյեանութեան տիտղոսին: Աղջկանց հաւաքականը կը հանդիսանայ 5րդ:

2000- ճատրակի 34րդ ողիմպիականին աղջկանց հաւաքականը կը հանդիսանայ 10րդ:

2001- աշխարհի խմբային ախոյեանութեան, Երեւանի մէջ, տղոց հաւաքականը կը հանդիսանայ երրորդ:

2002, 2004- ճատրակի 35րդ եւ 36րդ ողիմպիականներուն տղոց հաւաքականը կը գրաւէ երրորդ դիրքը:

2003- աղջկանց հաւաքականը կը հանդիսանայ Եւրոպայի խմբային ախոյեան:

2004- Հայաստան-աշխարհի հաւաքական մրցումին, Մոսկուայի մէջ, Հայաստան տեղի կու տայ 17.5-18.5 արդիւնքով:

Խրուաթիա-Հայաստան	1.5-1.5
Մեքսիքա-Հայաստան	1-2
Հայաստան-էքուատոր	2-1
Հայաստան-Յունաստան	2.5-0.5
Ռումանիա-Հայաստան	2-1
Հայաստան-Պիեթրոուսիա	1.5-1.5
Հնդկաստան-Հայաստան	1-2
Հայաստան-Գերմանիա	2.5-0.5
Հայաստան-Չինաստան	1-2
Ֆրանսա-Հայաստան	1.5-1.5
Հայաստան-Վրաստան	2-1
Ուքրանիա-Հայաստան	1.5-1.5

ՔՈՅՐ ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ՝ ԼԻՔԱՆԱՆԻ ... ՏՂՈՑ ՀԱՄԱՔԱԿԱՆԻՆ ՀԵՏ

Թորինոյի ողիմպիականին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հ.Մ.Ը.՝ Մ. ա կ ա ն քոյր Քնարիկ Մուրատեան: Ան

հանդէս եկաւ Լիբանանի ... տղոց հաւաքականին հետ եւ արձանագրեց 2 յաղթանակ, 4 հաւասարութիւն եւ 2 պարտութիւն: Ան յաղթեց Ճափոնի եւ Պահարէճի ներկայացուցիչներուն, հաւասարութիւններ արձանագրեց Մալթայի, Ալպանիոյ, Տաճիկիստանի եւ Սինկափուրի վարպետներուն հետ, իսկ պարտուեցաւ Անտորայի եւ Դանիոյ վարպետներէն: Բացի իրմէ, տղոց մրցումներուն կը մասնակցէին իգական սեռը ներկայացնող 3 այլ վարպետուհիներ:



2005ին Լիբանանի տղոց ախոյեան հանդիսացած քոյր Քնարիկ ճատրակի ողիմպիականի կը մասնակցէր երրորդ անգամ ըլլալով: Նախապէս ան մասնակցած էր 1996ի (Հայաստան), 2002ի (Սլովենիա) եւ 2004ի (Սլովակիա) ողիմպիականներուն:

ԱՄՈՅԵԱՆՆԵՐԸ



ԼԵՎՈՆ ԱՐՈՆԵԱՆ

Ծնած է Երեւան, 6 Հոկտեմբեր 1982ին:

1996, մինչեւ 14 տարեկան պատանիներու աշխարհի ախոյեանութեան երկրորդ:

1998, մինչեւ 16 տարեկան պատանիներու Եւրոպայի եւ աշխարհի ախոյեան: Պատանիներու ողիմպիականի խմբային ախոյեան:

1999, Եւրոպայի խմբային ախոյեան:

2000, Հայաստանի ախոյեան: Պատանիներու աշխարհի ախոյեանութեան երկրորդ-երրորդ դիրքերու բաժնեկից:

2002, Հայաստանի ախոյեան: Մինչեւ 20 տարեկան երիտասարդներու աշխարհի ախոյեան:

2003, Եւրոպայի ախոյեանութեան 4-11րդ դիրքերու բաժնեկից: Գերմանիոյ Տրեստէն եւ Մայնց քաղաքներու մրցաշարքերու ախոյեան:

2004, ճատրակի 36րդ ողիմպիականի եւ Եւրոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր: Ռէյքաւիքի միջազգային մրցաշարքի 1-8րդ դիրքերու բաժնեկից:

2005, աշխարհի բաժակակիր: Ներկայիս, աշխարհի թիւ 3 վարպետը դասուած:



ՎԼԱՏԻՄԻ ԶԱԿՈՒԲԵԱՆ

Ծնած է Պաքու, 7 Դեկտեմբեր 1971ին:

1986, մինչեւ 16 տարեկան պատանիներու աշխարհի ախոյեան:

1989, մինչեւ 18 տարեկան պատանիներու աշխարհի ախոյեան:

1988 եւ 1990, մինչեւ 20 տարեկան երիտասարդներու աշխարհի ախոյեան:

1989, Մ. Նահանգներու բաց ախոյեանութեան առաջին:

1991, մինչեւ 20 տարեկան երիտասարդներու աշխարհի ախոյեան:

1992, Հայաստանի հաւաքականին հետ ճատրակի 32րդ ողիմպիականի պրոնզէ մետալակիր:

1994, աշխարհի խմբային ախոյեանութեան չորրորդ:

1995, «Երեւան» ակումբի հետ Եւրոպայի ախոյեան ակումբներու ախոյեան:

1996, Հայաստանի ախոյեան: Ճատրակի 33րդ ողիմպիականին չորրորդ:

1997, Հայաստանի ախոյեան: Աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ:

1999, ՖիՏէի աշխարհի ախոյեանութեան երկրորդ:

2001, աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ:

2002, ճատրակի 35րդ ողիմպիականի պրոնզէ մետալակիր:

2003, ճատրակի Եւրոպայի ակումբներու ախոյեանութեան, թիւ 1 տախտակին վրայ կ'արձանագրէ լաւագոյն արդիւնքը (6 կէտէ կ'ապահովէ 5 կէտ):

2004, ճատրակի 36րդ ողիմպիականի պրոնզէ մետալակիր: Ներկայիս, աշխարհի թիւ 16 վարպետը դասուած:



ԿԱՐԵՆ ԱՍՐԵԱՆ

Ծնած է Երեւան, 24 Ապրիլ 1980ին:

1996, մինչեւ 16 տարեկան պատանիներու աշխարհի ախոյեանութեան երկրորդ:

1998, Մինսքի միջազգային մրցաշարքին, 184 մասնակիցներու մէջ ախոյեան:

1999, Հայաստանի ախոյեան: Մինչեւ 20 տարեկան երիտասարդներու աշխարհի ախոյեանութեան երրորդ:

ՖիՏէի աշխարհի ախոյեանութեան կը հասնի երրորդ հանգրուան:

2001, աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ: Տուպայի միջազգային մրցաշարքի ախոյեան:

2002, ճատրակի 35րդ ողիմպիականի պրոնզէ մետալակիր:

2004, «Տիգրան Պետրոսեան» մրցաշարքի երրորդ: Ներկայիս, Հայաստանի թիւ 3 վարպետը դասուած:



ՍՄԲԱՏ ԼԱՌՈՏԵԱՆ

Ծնած է Երեւան, 1 Փետրուար 1958ին:

Խ. Միութեան պատանիներու ախոյեան:

1972, 1982, Խ. Միութեան հաւաքականին հետ աշխարհի երիտասարդներու ախոյեանութեան տիտղոսակիր:

1978, Խ. Հայաստանի ախոյեան:

1983, Խ. Միութեան հաւաքականին հետ աշխարհի ուսանողներու ախոյեանութեան տիտղոսակիր:

1992, Հայաստանի հաւաքականին հետ ճատրակի 32րդ ողիմպիականի պրոնզէ մետալակիր:

1994, աշխարհի խմբային առաջնութեան չորրորդ:

1995, «Երեւան» ակումբի հետ Եւրոպայի ախոյեան ակումբներու ախոյեան:

- 1996, ճատրակի 33րդ ողիմպիականի չորրորդ:
- 1997, աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ:
- 1998, Հայաստանի ախոյեան:
- 1999, Եւրոպայի խմբային ախոյեանութեան առաջին:
- 2001, Հայաստանի ախոյեան: Երեւանի մէջ կը հիմնէ ճատրակի ակադեմիա:
- 2002, ճատրակի 35րդ ողիմպիականի պրոնոզէ մետալակիր: Ներկայիս, Հայաստանի թիւ 4 դասուած վարպետը:



ՎԱԳՐԻԵԼ ՍԱՐԳՍԵԱՆ

Մնած է Երեւան, 3 Սեպտեմբեր 1983ին:

- 1996, մինչեւ 14 տարեկան պատանիներու աշխարհի ախոյեան:
- 1998, մինչեւ 20 տարեկան երիտասարդներու Եւրոպայի ախոյեանութեան երրորդ: Ճատրակի պատանիներու ողիմպիականի խմբային ախոյեան:
- 2000, Հայաստանի ախոյեան:
- 2002, ճատրակի 35րդ ողիմպիականի պրոնոզէ մետալակիր: Եւրոպայի ախոյեանութեան 2-5րդ դիրքերու բաժնեկից:
- 2003, Հայաստանի ախոյեան:
- 2004, ճատրակի 36րդ ողիմպիականի պրոնոզէ մետալակիր: Ներկայիս, Հայաստանի թիւ 5 դասուած վարպետը:



ԱՐՏԱՇԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Մնած է Երեւան, 21 Յունուար 1967ին:

- 1987, «Տինամօ» ակումբին հետ Անդրկովկասի ախոյեան:
- 1990, ԽՍՀՄ-ի Միութեան պատանիներու ախոյեան:
- 1991, ԽՍՀՄ-ի Միութեան վերջին ախոյեան:
- 1990, 1992, 1993, Հայաստանի ախոյեան:
- 1992, Հայաստանի հաւաքականին հետ՝ ճատրակի 32րդ ողիմպիականի պրոնոզէ մետալակիր:
- 1994, աշխարհի խմբային ախոյեանութեան չորրորդ:
- 1995, Հայաստանի ախոյեան: «Երեւան» ակումբի հետ Եւրոպայի ախոյեան ակումբներու ախոյեան:
- 1997, աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ:
- 1999, Եւրոպայի խմբային ախոյեան:
- 2001, աշխարհի խմբային ախոյեանութեան երրորդ:
- 2002, 2004, ճատրակի 35րդ եւ 36րդ ողիմպիականներու պրոնոզէ մետալակիր:
- 2004, 2006, Հայաստանի ախոյեան: Ներկայիս, Հայաստանի թիւ 7 դասուած վարպետը:

With the compliments of

Restaurant Al-Mayass

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԵԱՆ ՅՈՒՇԵՐ (Գ. մաս)



Տոբթ. Միսաք Արզումանեան
ԱՄՆ ԽՈՍԷ

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Ասպարէզային աշխատանքս ծրագրելու եւ կազմակերպելու հանգրուանին էի, երբ յիշատակելի օր մը ինձի այցելեց Հ.Մ.Լ.Մ-ի Ֆուլթոնի աստղ, կուսակցական կարեւոր հանգամանքներով ծանօթ, ու համեստօրէն եւ անաղմուկ պարտականութիւններ յանձն առնող, Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն վաղաժամօրէն ահաբեկուած ու մարտիրոսացած եղբ. Սարգիս Ազնաւորեանը: Միշտ հաճելի եղած էր ինձի եղբոր հետ տեսակցելը: Համեստ, շատ լսող, քիչ խօսող, բայց բան ըսող, լուսարձակներէ հեռու, ազգային գործիչի, գաղափարական արի ղեկավարի արժանիքներով օժտուած հաւատաւոր Հ.Մ.Լ.Մ-ական եղբայրը:

Մտաւ, բարեկեց, իրեն յատուկ համակրելի ժպիտով, եւ առանց նախաբանի, փոխանցեց ողջոյնը Հ.Մ.Լ.Մ-ի այդ օրերու Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան բազմավաստակ ատենապետին՝ եղբ. Յովհաննէս Շահինեանին եւ Ֆուլթոնի մարզին մէջ իրեն խմբակից ու խմբապետ եղած, այդ օրերուն արդէն հանրածանօթ եղբ. Վարդիվառ Յովհաննէսեանին:

Զգացի, իսկոյն, որ Հ.Մ.Լ.Մ-ի ճամբով «որոգայթ մը» սարքուած է վերոյիշեալ եղբայրներուն կողմէ:

Խոստովանիմ, որ հազիւ կը ճանչնայի եղբ. Շահինեանը, եւ մինչ այդ առիթ չէր եղած, որ ծանօթացման ընդունուած արարողութեամբ մը ձեռք տանք իրարու:

Պարզուեցաւ, որ նախագագտու մ ճիշդ էր եւ եղբ. Ազնաւորեանը «ղրկուած էր» քովս, ստուգելու համար Հ.Մ.Լ.Մ-ի Պուրճ Համուտին պատկանելիութիւնս եւ տեղեկացնելու, որ մասնաճիւղը անդամական ժողով պիտի գումարէ եւ ընտրէ նոր վարչութիւն:

1964. Անդրանիկ Ուրֆալեան, Անտրէ Թապուրեան եւ Միսաք Արզումանեան:

Կը մտածուի եղբր, որ անպայման մաս կազմեմ անոր եւ ստանձնեմ ատենապետի պարտականութիւնը:

Այս երկրորդ անգամն էր, որ Հ.Մ.Լ.Մ-ի կառույցներուն (Սկստական Խորհուրդ, մասնաճիւղի վարչութիւն) մէջ գործելու փաղաքուշ հրաւերին կ'արժանանայի:

Առանց չափելու թէ ասպարէզային ինչպիսի՛ վնասի կրնար ենթարկել զիս, դրական պատասխանս տուի անոր:

Եղբ. Ազնաւորեան իր առաքելութիւնը յաջողցուցած բանագնացի մը գոհունակութեամբ, ջերմօրէն ձեռնուեցաւ, յաջողութիւն մաղթեց գլխաւորելիք գործիս, եւ լայնաժպիտ դէմքով յիշեցուց, որ ժողովին ներկայ ըլլալու չմոռնամ:

Քանի մը օր վերջ էր, կարողացի «Ազդակ»ին տրուած յայտարարութիւն մը՝ ժողովի վայրին, օրուան ու ժամկէտին մասին:

Ընտրական աշխատանքները ընթացան ըստ նախատեսութեանց եւ միաձայնութեամբ պաշտօնի կոչուեցայ վարչական հետեւեալ կազմով.- Զաքար Զորպանեան, Աւետիս Պալպանեան, Ալպէր Ունճեան, Ներսէս Գէորգեան, Յարութիւն Սասունեան, Խաչիկ Գալուստեան եւ ես:

Յայտնեմ, որ գործակիցներս բոլորն ալ միութենական վաստակ ունեցող եղբայրներ, քանի մը հատը ատենապետ եղած, ժողովական ու վարչական փորձառութեան տէր Հ.Մ.Լ.Մ-ականներ էին: Այս իրողութիւնը, իբրեւ դրական երեւոյթ, ապահովութիւն տուաւ ինձի, որ նորընտիր կազմը ատակ է իր պարտականութիւնները յաջողութեամբ պսակելու:

Ուրախութեամբ նկատեցի նաեւ, իրենց արտայայտութիւններէն, որ բոլորն ալ գոհ էին իմ ընտրութենէս... ուստի խանդավառութեամբ լծուեցանք գործի:

Առաջին հարցը, առաջին ժողովին, եղաւ աշխատանքի ուղե-

գիծ մը պատրաստելու կարեւոր նիւթը, որուն համար պարտականութիւն տուինք դիւանի եղբայրներուն, որ անցեալի փորձառութիւններէն թելադրուած՝ ծրագիր մշակեն ու բերեն ժողովին:

Հերթական ժողովներու օրն ու ժամը որոշեցինք ու փակեցինք նիստը:

ՉԵՌՆԱՐԿԻ ՀԱՐՅ

Այդ տարուան (1964) գործունէութեան, վարչական բազմաբնոյթ աշխատանքներէն ու իրագործումներէն կ'ուզեմ առանձնապէս անդրադառնալ իրաւունքի պաշտպանութեան ճամբով սրբագրուած, եւ բարւոք լուծումով մը Պուրճ Համուտի վարչական եղբայրներուն հպարտութիւն ու իրաւաւոր գոհունակութիւն շնորհած եղելութեան մը:

Բնական է, որ նորընտիր որեւէ վարչութիւն իր տարածուն ծրագիրները իրագործելու համար, պէտք է ունենայ կամ ապահովէ նիւթական համապատասխան պիւտճէ:

Առ այդ, յստակացում մը ունենալու մտքով հարց տուի գործակիցներուս, անցեալին իրենց օգտագործած հաստութեան միջոցառումներուն մասին:

Եղբայրները, գրեթէ միաբերան, տրտունջով յայտնեցին, որ դատապարտուած են շարժանկարի տոմս վաճառելով կամ վիճակահանութեան սակաւաշահ ձեռնարկներ կազմակերպելով գոհանալու եւ բազում աշխատանքով մնալու միշտ կարիքաւոր:

Մտածած են յաճախ պարահանդէս-ձեռնարկի մասին, բայց միշտ հանդիպած են արգելքի: Այս վերջին ըստւոյն ինծի համար բացատրութեան կը կարօտէր, ուստի հարցուցի, «ի՞նչ արգելք եւ որո՞ւ կողմէ»: Պատասխանուեցաւ՝ «Մրջա-

նային Վարչութեան կողմէ», ու տակաւին արդարացուցած են այդ արգելքը ըսելով, որ «Պուրճ Համուտի մեր ժողովուրդին ընկերային աւանդապահ պահպանողականութիւնը պարահանդէս չի կրնար հանդուրժել, հետեւաբար, ձեռնարկի յաշոյութեան համար հանդիսականներու բաւարար թիւ չէք ունենար: Առաւել, չենք արտօներ, որ Պէյրուսի շուկան այցելէք, տոմսակ սպառելու մտքով»:

Եւ քանի անգամ, վարչութիւններ թեւաթափ եղած են, առանց սակայն մարսելու եղածը:

Խնդիրը եզրակացութեան մը հասցնելու նպատակաւ, հարց տուի ժողովականներուն.-

«Կ'ուզէ՞ք եւ կը կարծէ՞ք որ մենք կրնանք պարահանդէս յաշոյցել: Յատկապէս, առանց Պէյրուսի հայ վաճառատուներուն դիմելու, կրնա՞նք 300 հոգի ունենալ ձեռնարկին»:

Հարցումիս պատասխանը միաձայն «այո» եղաւ եւ, սակայն, անյոյս էին որ նոր փորձ մը կրնայ հիններէն տարբեր կեցուածքի արժանանալ:

Իբրեւ պուրճ համուտցի կարելի չէր հաշտուիլ եղածին հետ...:

Առաջարկեցի, որ յաջորդ առաւօտ, եղբ. Զաքար Չորպաճեանին հետ (իբրեւ հարցին լաւատեղեակ), հանդիպինք Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յովհաննէս Շահինեանին, յայտնեք իրեն մեր կամքն ու որոշումը առ ի տեղեկութիւն եւ լսենք զինք՝ եթէ ըսելիք ունենայ: Եւ այսպէս, ժողովին լիազօրուելէ ետք, յաջորդ օրը, եղբ. Զաքարին հետ ներկայացանք եղբ. Շահինեանին դեղարանը:

Քիչ մը անակնկալի եկած, բայց հիւրամեծար ջերմութեամբ մը ընդունեց մեզ: Եւ քանի մը վայրկեանի բարեւտութիւն արարողութենէ ետք հարցուց մեր այցելութեան շարժառիթը:

Դիւանագիտական ոճով մը փոխանցեցի իրեն մեր որոշումը, զոր մտիկ ըրաւ քիչ մը այլափոխուած դէմքով: Փորձեց անցեալի իրենց կեցուածքը արդարացնելով մեզ տարհամոզել: Բայց երբ տեսաւ որ տեղի տուողը չենք, պայման դրաւ, որ Պէյրուսի քաղաքի մէջ տոմսակ «չվաճառուի»:

Այս ձեւով անցեալի սկզբունքային վեթոն վերցուած էր եւ զգալի եղաւ որ ժխտական կեցուածքը իրմէ աւելի իրեն գործակից միութեանական այլ դեկավարներու կողմէ որդեգրուած եւ պաշտպանուած էր: Այդ օր եղբ. Շահինեանը մեզի «շնորհեց» մեր իրաւունքը:

Այդ օր անգամ մը եւս փաստուեցաւ, որ «Կամենալը կարենալ է», մանաւանդ երբ կամքը իրաւունքի ուժով կը գօրանայ:



1972, Պէյրուս. Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի շեփոքախումբը միջ-մասնաճիւղային վերջին խաղերու փակման հանդիսութեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի անցեալի ղեկավարներէն խումբ մը կը շրջապատէ օրուան քաղաքապետ եղբ. Յակոբ Աշճեանը (աջէն վեցերորդը՝ ակնոցաւոր):
 Ձախէն առաջինը՝ Անդրանիկ Ուրֆալեան, Չրդը Աւետիս Պալապանեան, Յրդը Ներսէս Գեորգեան, ճրդը Զաքար Չորպանեան, վերջինը Յակոբ Պերպերեան:
 Աջէն առաջինը՝ Եփրեմ Քէնտիրճեան, Յրդը Յարութ Սասունեան, Կրդը Կարօ Մխիթարեան, Տրդը Միսաք Արզումանեան:

Լուրը ուրախութեամբ հաղորդեցինք վարչական եղբայրներուն, որոնք անասման խանդավառութեամբ, «անկատար տենչ մը» վերջապէս իրականացնելու հոգեվիճակով, անմիջապէս անցան գործի:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԱՆԳՐԱՆԻԿ ՊԱՐԱՀԱՆԳԵՍԸ

Շուրջ մէկ ամսուան բոլորանուէր աշխատանքով հասանք պարահանդէսի թուականին: Մինչ այդ արդէն կրցած էինք «Գարլթոն» պանդոկի սրահը ապահովել:

Վաճառած էինք 350է աւելի տոմսեր:
 Պարահանդէսին հովանաւորութիւնը սիրալոյսով ստանձնած էր այդ օրերուն նորընտիր պետական երեսփոխան Անտրէ Թապուրեանը, որ իր կողմէ հրաւիրած էր իրենց ցանկակից այլ երեսփոխաններ:

Հետեւեալ, նիւթականին հետ բարոյական մեծ վարկ մըն ալ շահած ըլլալու ապահովութեամբ ու գոհունակութեամբ սկսանք պարահանդէսը:

Անբացատրելի ոգեւորութեան մթնոլորտ մը համակեց ներկաները: Պարահարթակը ժամեր գրաւուած մնաց Պուրճ Համուտի «պահպանողական» երիտասարդներուն կողմէ:

Ըսել տակաւին, որ շատ յաջող անցաւ Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած առաջին պարահանդէսը, շատ բան կրնայ չաւելցնել վերելի նկարագրութեան վրայ: Բայց պէտք է յիշեմ, որ երեկոյթին ընթացքին տեղ մը, վարչութեան «բա-

րի գալուտի խօսք»ով հիւրերն ու ներկաները ողջունելէս ետք, երբ Հ.Մ.Ը.Մ.ի ոսկեայ նշանակ-կրծքանշանով զարդարեցի օրուան հովանաւոր պրն. Անտրէ Թապուրեանին լամբակը, սրահը ծափերու խլացուցիչ տարափով միացաւ տուջութեան արարողութեան:

Կ'ուզեմ սակայն արձանագրել այստեղ, որ անխառն չեղաւ մեր ուրախութիւնը, եւ քիչ մը սրտաբեկ մեկնեցանք այդ աննախընթաց ձեռնարկէն:

Յարգելով միութեան աւանդական կարգն ու կանոնը, այդ օր հրաւիրած էինք Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան պատուարժան անդամները եւ պատուոյ սեղանին վրայ վերապահած էինք իրենց համար աթոռներ: Դժբախտաբար, այդ տեղերը մնացին թափուր, գրաւելով ուշադրութիւնը շարք մը հանդիսականներու...:

Հետաքրքրուած էի գիտնալու պատճառը, արդեօ՞ք գերադաս մարմինը իր թելադրանքին չանսացող վարչութեան ձեռնարկը այդ կեցուածքով դիմաւորած էր...: Չուշացաւ բացատրութիւնը:

Յաջորդ առաւօտուն, աշխատանքի գրասենեակս հագիւ հասած, հնչեց հեռաձայնի կանչը: Վերցնելով գործիքը, քիչ մը զարմանքով լսեցի Շրջանային Վարչութեան ատենապետին ձայնը: Բարի լոյս մաղթեց եւ հեւքոտ ձայնով մը յայտնեց, որ ձեռնարկին ներկայ եղած բարեկամներէ իմացեր է պարահանդէսին ընդգծելի յաջողութեամբ պսակուած ըլլալը: Ողջունեց վարչութիւնը, գնահատեց մեր տարած շնորհաւորելի աշխատանքը: Պատմեց որ տիկին Շահինեանը անսպասելիօրէն անհանգստացած է, եւ պատճառ եղած որ չկարենան հանդէսին գալ: Խոստացաւ յաջորդ անգամ անպայման մեր կողքին գտնուիլ...:

Յետ այնու մեր եւ Շրջանային Վարչութեան յարաբերութիւնները ընթացան անամպ երկնքի տակ եւ քանի մը տարի «Գարլթոն»ի պարահանդէսը դարձաւ ու մնաց Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան, աւանդական, շահաբեր ձեռնարկը:

Ալ ուրիշը մեղադրելու պատճառ չունեցան վարչական գործակիցներս եւ բոլորին համար անգամ մը եւս հաստատուեցաւ, որ «Կամենալը կարենալ է»:

Առաջին տարեշրջանը բոլորեցինք արդիւնաւոր աշխատանքով, բայց մասնաճիւղի անդամական ժողովին կողմէ արժանացանք վերընտրուելու «պատիժ»ին:

Այդ երկրորդ շրջանի աւարտին, Մերձաւոր Արեւելքի ներկայացուցչական ժողովին մասնակցեցայ եւ պատահեցաւ, որ զիս բաժնէն Պուրճ Համուտէն եւ փոխանցեն նորընտիր Շրջանային Վարչութեան, ուր պիտի մնայի երկար, փոխատենապետի պաշտօնով եւ երկարատեւ ու մտերմիկ գործակցութեան շրջան մը պիտի ունենայի եղբ. Յովհաննէս Շահինեանին հետ:

Պուրճ Համուտեան յուշերուս երկար դիպաշարէն ներշնչուած, մասնաճիւղին 70ամեայ գործունէութիւնը իսկական եւ վաւերական գնահատանքով մը արժեւորելու եւ ներկայացնելու բաղձանքով, կ'ուզեմ այստեղ արտագրել հատուած մը այն խօսքէն, զոր իբրեւ օրուան պատգամախօս արտասանեցի մասնաճիւղին հիմնադրութեան 60ամեակին առիթով տեղի ունեցած յրեկոնական շքեղ հանդիսութեան:

«Մնած օրէն մինչեւ այսօր, միշտ համեստ եղաւ Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի լուսազղը կրող հաւաքավայր ակումբը, բայց անչափելի քաշողականութեամբ իր շուրջը հաւաքեց սերունդ - սերունդ հայորդիներ:

«Մարգագաշտ չունեցաւ, բայց կիրարկեց մարգախաղեր (ֆուքպոյ, պասքէթպոյ, աթլէթիզմ, հեծիկ...), կազմեց տասնեակներով խումբեր, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէէի եւ Պուրճ Համուտի քաղաքապետութեան խաղավայրերուն ու այլ հողատարածքներուն վրայ, իր շարքերուն մէջ կազմաւորուած մարզիկները, «Հ.Մ.Ը.Մ.ի

գերագոյն շահերուն վիճելի պահանջքովը» գացին եւ գօրացուցին քոյր մասնաճիւղերու կամ հաւաքական-ներկայացուցչական անուն կրող խումբերը:

«Սկաուտական բանակավայր չունեցաւ, բայց իր յորդաբերը գացին բանակումէ բանակում, եւ իրենց շեփորախումբին հայատրոփ կշռոյթով տողանցեցին հայրենիքի յաւերժաբով տեսիլքը իրենց աչքերուն, հայուն համագգային նպատակներուն հասնելու կրքոտ տենչը իրենց սրտերուն...:

«Յիշեմք Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը: Ի պատիւ Պուրճ Համուտի մասնաճիւղին, պէտք է անելցնեմ, որ Լիբանանի մէջ ինքը եղաւ առաջին հաւատացողը սկաուտական նուագախումբի մը եզակի կարեւորութեան եւ 1944ին շարքերը օժտեց անով:


«Տարիներ անց, այսօր ալ կը հաստատենք, որ շնորհիւ այդ իրագործումին, Հ.Մ.Ը.Մ.ի տողանցքները եղան գաղափարաւանդ շքերթներ: Մեր տօնախմբութիւնները դարձան ազգային ձգտումները շեփորող ու կենսաւորող մեկական փառատօններ:


«Այս բոլորով, Պուրճ Համուտի մէջ, ինչպէս ամէն տեղ, Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի նուիրման տորմիդ»:

«...Յարգանք Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը կերտած, հռչակուած թէ խոնարհ բոլոր հերոսներուն»:
(Վերջ)

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arhous-Berthaud, Ferre vue du Ciel, Licence 075 960031 - **StudioVCCP** 2007 7105

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select
your Journey

Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- 2 -

«Ճ. Մրցումներուն կը մասնակցի յաղթելու վճռակամութեամբ: Ան երբեք տրկարութիւն չի ճանչնար»:

**Պետրոս Շեմմեսեան
ՊԷՅՐՈՒԹ**

**«Կանգ մի առներ սրաթոռիչ երիվար,
Նպատակս տկարութիւն չի ճանչնար» :**



Մարզական մրցակցութիւնները կը նմանին առանց գէնքի կռիւի, պատերազմի: Ինչպէս զինուորին ներքի չէ մտածել պարտութեան կամ փախուստի մասին, նոյնպէս մարզիկին արգիլուած է ի յառաջագունէ համակերպիլ պարտութեան գաղափարին հետ:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը պէտք է քաջ գիտնայ, որ մարզական գետնի վրայ պայքարի իր ոգին մեծ դեր եւ ազդեցութիւն պիտի ունենայ, ոչ միայն դաշտի վրայ, մրցումին ճակատագրին վրայ, այլ՝ պայքարի ոգին անբակտեիթօրէն իր հետ պիտի մնայ մինչեւ խոր ծերութիւն: Պայքարի ոգին մաս պիտի կազմէ իր նկարագրին:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մարզական իր մրցակցութեան ընդմէջէն կը տիրանայ սքանչելի փորձառութեան, մարզական կեանքի իր սկզբնաւորութեան ան կը թրծուի պայքարի քուրաչին մէջ: Այդ պայքարը սկիզբն է կեանքի մեծ պայքարին:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը պայքարի եւ յաղթելու վճռական ոգիով զինուած՝ պատրաստ է յաղթահարելու կեանքին մէջ հանդիպած իր մեծ ու փոքր դժուարութիւնները: Ահա թէ ինչո՞ւ, կրկնելու գնով ամէն առիթի կ'ըսենք, թէ Հ.Մ.Ը.Մ.ը մարդակերտումի եւ հայակերտումի դպրոց է, մարզական սոսկական միութիւն մը ըլլալէ առաջ: Հ.Մ.Ը.Մ.ը իր մարզական ձեռնարկներով, նոր սերունդի հոգիներուն մէջ պայքարի ոգին ցանկելով, լաւագոյնս կը պատրաստէ իր մարզիկները՝ կեանքի վաղուան պայքարին:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին յաղթելու վճռակամութիւնը երբեք չի հակադրուել որիմպիական խաղերու ընդհանուր կարգախօսին, որ կ'ըսէ. «Կարեւորը մասնակցիլն է»: Այլ, ընդհակառակն, գայն կ'ամբողջացնէ եւ կը զօրացնէ: Յաղթելու վճռակամութիւնը, անշուշտ, կու գայ մասնակցութեանէն ետք:

Ինչպէս զարգացման եւ դաստիարակութեան այլեւայլ մարզերու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը նաեւ հո'ս պիտի գատորոշուի այլ մարզիկներէ, պարտութիւն եւ յուսահատութիւն չճանչցողի իր վճռակամութեամբ:

Մեծ բանաստեղծին վերոյիշեալ խօսքը Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր մարզիկի համար պէտք է ընդունուի իբրեւ գօտեպնդիչ կարգախօս:

Իսկապէս, բոլոր մարզիկներու համար եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին համար յաղթելու վճռակամութիւնը իրմէ անբաժան պէտք է ըլլայ, մրցումին սկիզբէն մինչեւ խաղին աւարտը հաղորդող իրաւարարին սուլիչը:

Կան մարզիկներ, որոնք ի տես զօրաւոր մարզիկի մը կամ խումբի մը, մրցումին առաջին իսկ վայրկեանին կ'ընկրկին եւ կը յուսալքուին: Այսպիսիներ ի յառաջագունէ հաշտուած կ'ըլլան իրենց պարտութեան հետ եւ մրցումին արդիւնքը ի սկզբանէ ճշդած:

Անկախ այն իրողութենէն, թէ «գնդակը կ'ըր է», ինչ որ կը նշանակէ թէ կարելի չէ մրցումին ճակատագիրը ճշդել մինչեւ անոր աւարտը, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի կամ խումբի մը համար, յաղթելու վճռակամութիւնը բնագոյ պէտք է ըլլայ անոր մէջ, որովհետեւ ան կը պատկանի ժողովուրդի մը, որուն գոյութիւնը յարատեւ պայքար եղած է իր պատմութեան ամբողջ ընթացքին, եւ ի պատիւ այս ժողովուրդին պայքարի ոգիին, ան գոյատեւած է դարեր շարունակ:

Տեսէք թէ ո՞ւր մնացին այն բոլոր հին ազգերը, որոնք պատմութեան լուսաբացին ճամբայ ելան հայ ժողովուրդին հետ, սակայն չկարողացան շարունակել իրենց ընթացքը եւ առյաւէտ կորսուեցան, դո՛ւրս մնացին պատմութեան թատերաբեմէն: Անոնք ըլլան հիթիթներ, սոււմերներ, խուրի միտանիներ եւ ուրիշներ: Բոլորը ինկան պատմութեան վտանգաւոր ճամբաներուն վրայ, որովհետեւ անոնք գուրկ էին պայքարի վճռորոշ ոգիէն: Մինչ հայ ժողովուրդը, շնորհիւ ապրելու եւ գոյատեւելու իր ոգիին, իր գոյամարտը կը շարունակէ մինչեւ այսօր:

ՄԱՂԵՐԸ

Ինք, որ անտիպաներու սիրահար մըն էր, առիթը չէր խնայեր Հ.Մ.Ը.Մ.ի Մեծերու անտիպաները «Մարզիկ»ին փրամադրելու, չէր կրնար պատկերացնել, թէ օրին մէկը կարգը պիտի գար իր անտիպաներուն:

Եղբ. Յարութիւն Գեղարդի անտիպաներուն մասին է ակնարկութիւնը: Որքան գիտեմք, բաւական թիւ կը կազմեն անոնք: Այսպէս կը ներկայացնենք երկու նմոյշ, «Մարզիկ»ի արխիւներէն առնուած:

Իբրեւ խմբագրական լոյս տեսնելու համար, անոնք թերթին խմբագրութեան փոխանցուած են 1993ի Մարտ, Ապրիլ ամիսներուն: Սակայն, օրին անոնք չեն հրատարակուած: 13 փարի ետք զանոնք ընթերցողներու ուշադրութեան յանձնելով, ուշացած պարտք մըն է որ կը հատուցենք իր յիշատակին:

Փայտէ բոլորակով պարսպուած մետաղի կամ ձարի [մագոտ, թաւ-«Մ.»] թելերով ցանց, որ կ'արգիլէ աղտ ու քարի անցքը եւ թոյլ կու տայ ստացումը՝ ընտիր ընդեղէնի:

Եւ կան նրբահիւս ապրշումէ բարակ մաղերը, որոնցմէ անցած նաչիճ ալիւրով կը պատրաստուին ազնուական հատիկը, հաղորդութիւնն ու նշխարը:

Պատկերաւոր իմաստով ալ, ամէն ասպարէզի մէջ, անհրաժեշտ է անցնիլ «մաղ»երէ՝ ստանալու համար դիրք ու պաշտօն, ծառայելու իրաւունք, պատասխանատուութիւն ըստանձնելու կոչ ու հրաւէր:

Ուսանողը կ'անցընէ բերանացի ու գրաւոր քննութիւն՝ փոխելու համար կարգ, ընդունուելու՝ համալսարան:

Պաշտօնի մը թեկնածուն կ'ենթարկուի հարցախոյզի, գանազան ստուգափորձերու՝ համաձայնագիր մը ստորագրելէ առաջ:

Արհեստաւորէն կը պահանջուի փորձառութիւն, ձիրքի եւ հնարամտութեան ապացոյց՝ նախքան գործ կամ ապսպրանք վստահուիլը անոր:

Ձինուորը կը հասնի զօրավարի աստիճանի՝ փշաթելերու ցանցերը նուաճելէ, ռազմաճակատի վրայ իր գիտութեան եւ խիզախութեան փաստերը տալէ յետոյ:

Չի բաւեր ունենալ ներկուտակ զօրութեանականութիւն, կարչնեղ բազուկ եւ ամրակոփ մարմին՝ մարզագաշտի մրցորդներէն ինքզինք գերադաս համարելու, մարտահրաւէր ուղղելու համար ախոյեաններու: Փորձէ եւ փորձառութեանէ զուրկ քանի՜ հսկաներ ինկած են կուփամարտի հարթակին վրայ՝ ուշակորոյս, մրցումի կէսին:

Քաղաքական եւ ընկերային ասպարէզներու մէջ ալ մտապաշարն ու բարի կամեցողութիւնները առանձին՝ բացարձակ գրաւականները չեն կրնար կազմել նուիրապետական բարձ-

րագոյն աթոռներու ձգտումին:

Հանրաշահ վաստակն ու բարոյականի ըմբռնումը, ընդհանուրին ի շահ անձնուրացութիւնն ու զոհաբերումը կարողութեան ու տաղանդին չափ անհրաժեշտ են՝ ապահովելու համար ընտրանիին վստահութիւնն ու ձայնը, ժողովուրդին վերջին, վճռական քուէն:

Կը պատահի որ մաղը ծա՛կ ունենայ, եւ մէկ - երկու ժամանակաւոր «բախտաւոր»ներ սպրդի՛ն, անցնին ցանցէն ու տեղ գրաւեն արժանաւորներու կարգին:

Եւ հազուադէպ, բայց անուրանալի իրողութիւն՝ ակույց մը զոհ չ'էրթա՞ր, երբեմն, անդառատ եղինձին, նոյնիսկ սրբազան հացին մէջ գաղտագողի մուտք գործած մանրիկ խճաքարին...

Ի՛նչ փոյթ, սակայն:

Կեանքի մէջ մաղերու դերը կը մնայ անփոխարինելի ու կենսական:

Երկրորդ, երրորդ հանգրուանի մը՝ բարակ մաղերը սովորաբար կը բռնեն, կը կասեցնեն անպէ՛տ, վնասակար տարբերը՝ ապահովելով ընկերութեան մը, ժողովուրդի մը եւ երկրի մը ապագան:

Այսուհանդերձ, ուշադի՛ր, մի՛շտ եւ ամէնուրեք:

Մաղերը ծակ չըլլա՛ն...

ՀԱՅ ՈՒ ԳՆԴԱԿ

«Արգելակալաններու մէջ երբ տեսայ՝ ամբողջ օրուան սննդապաշար լոկ կտոր մը հաց ունեցող վտիտ մանուկները, որ ուրախ-գուարթ կը վագէին գնդակի մը ետեւէն՝ տամկացան աչքերս, բայց մխիթարուեցայ, նոյնիսկ յուսադրուեցայ՝ ապագայի հաշուոյն»:

Կեանքի խորունկ ցաւը եւ անուրանալի մէկ ճշմարտութիւնը կը մատնանշեն Ֆուլթպոլի նշանաւոր մարզիչի մը այս խօսքերը:

Արդարեւ,

Արուեստ ու ճարտարարուեստ հեքիաթային պուպրիկներ, մոգական խաղալիքներ կը տրամադրեն ունեւոր դասակարգի մանուկներուն եւ պատանիներուն, այսպէս քաղցրաւենիներ ու համադամ սննդանիւթեր կը շուայեն՝ առանց, ամէն անգամ, դրական դեր կատարելու անոնց առողջութեան եւ նկարագրի կերտումին մէջ:

Իսկ անդին, պատերազմիկ կամ տնտեսապէս աղքատ երկիրներու տարածքին, անոք եւ անտուն, հարուստ քաղաքներու խոնարհ թաղերու դպրոցի փոխարէն փողոցը բաժին ունեցող տղաք կը մնան յաճախ անօթի, գո՛ւրկ ամէն զբօսանքէ եւ կրթանքէ՝ բնականոն աճում մը կարենալ ապահովելու համար իրենց մանկութեան:

Հո՛ս է որ Կի Ռուի սրտառուէ հրաւէրը գեղեցկօրէն կը բացայտէ առողջական եւ մանկավարժական իր լրիւ իմաստը:

Ճարենք այս վերջիններուն նուազագոյն սննդառութիւն մը, որ նախ՝ ապրին, ապա դիմանան տաքին ու ցուրտին, յաղթական պայքար տանին ցաւի եւ հիւանդութեանց դէմ:

Ստեղծենք իրենց՝ աժան եւ դիւրին հաւաքական զբօսանք, որ փայտի կամ ուռմբի կտորներով «պատերազմ» չխաղան

իրարու հետ, դառնացումն ու վայրագ զգացումները չմթագնեն իրենց ներաշխարհը եւ չդարբենն մատղաշ այդ էակներէն ապագայի զարտուղի մարդը, բացասական տիպարը ընկերութեան:

Հա՛ց եւ գնդա՛կ:

Աշխարհի չորս կողմը, քիչ մը ամէն տեղ, ընչազուրկ խաւերէ, անհիւրընկալ երգիքներէ քանի-քանինե՛ր Ֆուլթպոլի շուրջ հիւսեր են իրենց եղբայրութիւնը, երջանկացեր՝ գնդակի հետ մտերմութեան պահերուն, եւ ապագային դարձեր մարզաշխարհի փայլուն աստղեր՝ ուրախութեան աղբիւր հանդիսանալով մարդկութեան:

Աքսորէն եւ անապատէն կիսամեռ վերադարձող հայ պատանիներէն քանինե՛ր որբանոցի, ակումբի կամ պարզապէս փողոցի մէջ փոքրիկ գնդակի մը ետեւէն վազելով՝ գտած են վերապրելու հրճուանքը, յաղթանակ կերտելու կեցուցիչ զգացումը, եւ սատարած՝ առողջ եւ ամուր հաւաքականութեան մը կերտումին:

Աշխարհի չորս անկիւնները, կորստեան անդունդին եզերքը տուայտող անթիւ ու ազագուն պատանիներ կը սպասեն որ ձե՛ռք երկարի իրենց:

Կ՛ախկալեն գթառատ սրտի քիչ մը ջերմութիւն, գորովոտ աչքի կենսատու ճաճանչ, որ վերադառնան կեանքի:

Տա՛նք, ամէն բանէ առաջ, հաց ու գնդակ, բոլորին:



Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130

VARTAN KAZANDJIAN

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com

Joillier-Orfevre Fonde en 1920

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ի ՀՐԱՉԴԱՆԻ, ՄԱՍԻՍԻ ԵՒ ԱՊԱՐԱՆԻ ՄԻԱՒՈՐՆԵՐԸ

Թղթակիցներ ՀՐԱՉԴԱՆ, ՄԱՍԻՍ, ԱՊԱՐԱՆ

1 1991 թվականի Յունուարի 10ին Հրազդան քաղաքում հիմնադրուեց Հ.Մ.Ը.Մ-ի Հրազդանի մասնաճիւղը, որին անդամագրուեցին 100ից ավելի սկաուտներ: Նոյն թվականի Յուլիսի 26ին մասնաճիւղը գրանցուեց Հրազդանի քաղաքային գործկոմի որոշմամբ: Ներկայումս Հ.Ա.Ս.Կ.Ի Հրազդանի միավորում անդամագրուած են շուրջ 30 սկաուտ:

Հրազդանի միավորը աշխոյժ մասնակցութիւն է ունեցել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի կազմակերպած բոլոր միջոցառումներին, սեմինարներին եւ բանակումներին:

Այսպէս, 1991 թվականի Յունուարի մասնակցել է

Ծաղկաձորի ողիմպիական սպորտային համալիրում կազմակերպուած երաժշտական միջոցառմանը, որը նուիրուած էր Գետաշէնի գաղթական երեխաներին:

Օգոստոսի 8-13ը 25 սկաուտներով մասնակցել է Ուլաչիկի ձորում կայացած դպրոց - բանակումին:

Հոկտեմբերի 11ին միավորում տեղի

ունեցաւ երդման արարողութիւն:

1992 թվականի Յունուարի 10ին նշուեց միավորի հիմնադրման մէկ տարին:

Յուլիսի 12-20ը միավորից մէկ սկաուտ Մ. Նահանգներում մասնակցել է Նաւասարդեան խաղերին:

Օգոստոսին կայացած համահայաստանեան խմբապետական բանակումին մասնակցեցին 6 աստիճանաւոր:

1993 թվականի Ապրիլի 17ին կազմակերպուեց ծառատունկ՝ Հայրենական Մեծ Պատերազմի զոհերի յուշար-

1994 թվականի Օգոստոսի 7-19ը Բիւրականում կայացած համա-Հ.Մ.Ը.Մ-ական Ե. ընդհանուր բանակումին մասնակցեցին 7 սկաուտներ:

Դեկտեմբերի 7ին երկրաշարժի զոհերի յիշատակին կազմակերպուեց միջոցառում:

Դեկտեմբերի 29ին գայլիկները եւ սկաուտները տօնեցին Ամանորը:

1995 թվականի Յուլիսի 10-17ը Սեւանում տեղի է ունեցել Հրազդանի միավորային բանակումը, որին մասնակցել են 57 սկաուտ:

1996 թվականին 3 ըսկաուտներ մասնակցել են Ծաղկաձորում անցկացուող Ա.Պ.Հ. երկրների առաջին բանակումին:

1997 թվականի 9 սկաուտներ մասնակցեցին Լոռու մարզում տեղի ունեցած համահայաստանեան բանակումին: Դեկտեմբերի 7ին տեղի ունեցաւ երկրաշարժի օրուան նուիր-

ւած միջոցառում:

1998 թվականի Մայիսի 8ին 40 սկաուտ մասնակցեցին Շուշիի ազատագրման 6րդ տարեդարձին նուիրուած միջոցառմանը: Մայիսի 28ին թուով 56 սկաուտ մասնակցեցին դէպի Սարդարապատ կազմակերպուած երթին: Նաեւ մասնակցել են Աղաւնաձորում



ձանի տարածքում:

Յունիսի 9ին դէպի Թեղենիս լեռան լանջ կազմակերպուած արշաւի ընթացքում Գէորգ Չաւուշ յուշադրելու մօտ կատարուեց երդման արարողութիւն:

Յունիսի 7-13ը Մեղրաձորում տեղի է ունեցել Հրազդանի միավորային բանակումը, որին մասնակցել են 80 սկաուտ:



մասնակցեցին Բիւրականում կայացած Համահայաստանեան գալլիկական բանակումին: Սեպտեմբեր ամսին Ծովինար Յովսէփեանը մասնակցել է Ուքրանիայում կայացած «Excel-Scout» սեմինարին: Օգոստոս ամսին 6 սկաուտ մասնակցել են Համահայաստանեան Ա. կարգի սեմինարին:

2001 թուականի Յուլիս ամսին միաւորի սկաուտներ մասնակցեցին եւօրեայ-արշաւ բանակումին: 18 գալլիկ մասնակցեցին Համահայաստանեան գալլիկական բանակումին:

կազմակերպուած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ. ընդհանուր բանակումին:

1999 թուականի Ապրիլի 18ին 52 սկաուտներ մասնակցել են «Սկաուտի Օր»ուան նուիրուած միջոցառմանը: Մայիսի 1-2ը 90 սկաուտ մասնակցեցին Հայաստանի եկեղեցիների ու վանքերի մաքրման ու բարեկարգման միջոցառմանը:

Յուլիս ամսին 15 սկաուտ մասնակ-


ցեցին Ծաղկաձորում կայացած Համահայաստանեան բանակումին:

Օգոստոսի 1-10ը 8 գալլիկ մասնակցեցին Ծաղկաձորում կայացած Համահայաստանեան գալլիկական բանակումին:

2000 թուականի Փետրուարի 25-27ը 5 սկաուտ պատասխանատուներ մասնակցեցին Ծաղկաձորում կայացած Բ. կարգի դպրոց-բանակումին: 16 սկաուտ

ՄԱՍԻՍԻ ՄԻԱՌՐԸ

Իմնադրուել է 1991 թուականի Փետրուարի 21ին, եղբայրներ Հայկ Աղաբաբեանի, Մասիս Յարութիւնեանի, Ռոպէրթ Մարկոսեանի, Կամօ Նազարեանի, Նուէր Առաքելեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի Շրջանային



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com E-mail: info@sassouniantools.com

Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Մամիկոնի կողմից: 15 Հ.Մ.Ը.Մ.ականների աշխոյժ աշխատանքի շնորհիւ հիմնադրման առաջին իսկ տարում Մասիսում կազմակերպութեան անդամակցում էր 60 սկաուտ: Մինչեւ 1998 թուականը Մասիսի մասնաճիւղի անդամների թիւը հասնում էր 200ի:

Մասիսի մասնաճիւղն աշխոյժ մասնակցութիւն է ունեցել է Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.ի կազմակերպած բոլոր միջոցառումներին, սեմինարներին եւ բանակումներին: Այսպէս, 1991 թ.ին մասնակցել է Մ. Նահանգների սկաուտների կողմից Հանքաւանում կազմակերպուած բանակումին (10 սկաուտ):

1992 թուականին 8 անդամներ մասնակցել են Հանքաւանում անցկացուած Բ. կարգի բանակումին եւ արժանացել շնորհակալագրերի:

1993 թուականին 5 սկաուտներ մասնակցել են Հանքաւանում կազմակերպուած Ա. կարգի բանակումին: Նոյն թուականին Մ. Նահանգներում կազմակերպուած դպրոց-բանակումին մասնաճիւղը ներկայացրել է քոյր էլէն Պետրոսեանը:

1994 թուականին 9 սկաուտներ մասնակցել են Բիւրականում կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. ընդհանուր բանակումին:

1995 թուականին եղբ. Ալֆրէտ Աղաբաբեանը մասնակցել է Չարենցաւան, էջմիածին եւ Արարատ մասնաճիւղերի կողմից կազմակերպուած սեմինար-բանակումներին:

1996 թուականին 6 սկաուտներ մասնակցել են Ծաղկաձորում անցկացուող Ա.Պ.Հ. երկրների առաջին բանակումին:

1997-1998 թուականներին Մասիսի մասնաճիւղը շարունակել է մասնակցել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կազմակերպած բոլոր միջոցառումներին:

2003 թուականից Մասիսի մասնաճիւղը վերսկսել է իր աշխատանքները:

ց ա ն կ ա ց ա ն ք սկաուտ դառնալ, ինչպէս Հայաստանի տարբեր քաղաքներում եւ ամբողջ աշխարհում շատ պատանիներ ու աղջիկներ: Եղբ. Աշոտի շարունակական աշխատանքը, նրա բոլոր պատմութիւնները սկաուտութեան մասին աւելի էին մեծացնում այդ ցանկութիւնը:



Հետագայում մենք տեղեկացանք, որ Հայաստանի Ազգային Սկաուտական կազմակերպութեան Երեւանում գրտնւող կենտրոնական գրասենեակում գիտեն մեր դասարանի մասին եւ պատրաստում են մեզ այցելել: Անհամբեր սպասում էինք: Դա տեղի ունեցաւ 2000 թուականին: Մեզ այցելեցին եղբայր Հրաչ Շմաւոնեանը եւ եղբայր Յարութ Յարութիւնեանը: Հանդիպման ընթացքում նրանք գրուցեցին մեզ հետ, ասացին, որ ամէն ինչ լինում է աստիճանաբար եւ, որ մենք չուտով կը հանդիպենք հայաստանցի սկաուտներին: Այս այցելութիւնը մեզ շատ խրախուսեց, մենք էլ աւելի ջանասիրութեամբ էինք ուսում-

նասիրում սկաուտական գիտելիքները: Որոշ ժամանակ անց մենք ստացանք հրաւէր եւ մեր դասարանից երկու հոգի՝ քոյր Գոհարը եւ եղբայր Սեւակը մասնակցեցին Ծաղկաձորի եռօրեայ աստիճանաւորական դպրոց - բանակումին: Նրանք մեծ ոգեւորութեամբ վերադարձան Ծաղկաձորից ու մեզ սկսեցին սովորեցնել այն գիտելիքները, որոնք ստացել էին բանակումին ընթացքում:

Դրանից յետոյ մեզ բազմաթիւ առիթներ ստեղծուեցին մասնակցելու համահայաստանեան սկաուտական եւ գայլիկական միջոցառումների, ծանօթացանք Հայաստանի տարբեր միաւորների սկաուտների հետ, ձեռք բերեցինք նոր ընկերներ, ինչպէս նաեւ այնպիսի կարեւոր գիտելիքներ, որոնք երեխաները կարող են սովորել միայն սկաուտական շարժման անդամակցելով:

2002 թուականի ամրանը, մեր դասարանից 5 հոգի մասնակցեցին գայլիկ պատասխանատուների համահայաստանեան սեմինարին ու գայլիկական բանակումին: Վերադառնալուց յետոյ մենք հաւաքեցինք նաեւ գայլիկական խմբեր:

Նոյն թուականին, եղբ. Աշոտի ջանքերով մենք ունեցանք տարագներ:

Միաւորում այժմ գործում է սկաուտական մէկ խումբ եւ գայլիկական մէկ վոհմակ: Իւրաքանչիւր տարի մենք անցկացնում ենք ուսումնական տարւայ ամփոփիչ միջոցառում, որի ընթացքում ընտրուում է լաւագոյն արի, արեւոյշ, գայլիկ, արծուիկ եւ աստիճանաւոր:



ԱՊԱՐԱՆԻ ՄԻԱՌՈՐԸ

1998 թուականի Հոկտեմբերի 5ն էր, երբ մեր դասուկը՝ եղբ. Աշոտը մեր դասարանում առաջին անգամ խօսեց սկաուտութեան մասին: Մեզ հետաքրքրեց այդ շարժումը. մենք



Միաւորի սկսողական գործունէ-
ութիւնը իրականացում է Ապարանի
թիւ 2 միջնակարգ դպրոցի դասարան-
ներից մէկում:

2004 թուականի Մայիսին մեր միա-
ւորի աստիճանաւորական կազմը ծրա-
գիր ներկայացրեց Ապարանի քաղաքա-
պետարան: Այն հաւանութեան արժա-
նացաւ քաղաքապետի կողմից եւ Ֆի-
նանսաւորուեց: Ծրագրի շրջանակնե-

արշաւների, ծանօթացանք շատ սկա-
ուտների հետ, ձեռք բերեցինք նոր ըն-
կերներ: Այսօր մենք շատ գոհ ու հպարտ
ենք, որ դարձանք սկսող ու սովորե-
ցինք սկսողական գիտելիքներ:

Միաւորի սկսողական գործունէ-
ութիւնը իրականացում է Ապարանի
թիւ 2 միջնակարգ դպրոցի դասարան-
ներից մէկում, որը ժամանակաւորա-

պէս տրամադրուել է դպրոցի տնօրէ-
նութեան կողմից: Միաւորը կարիքը ու-
նի մնալուն տարածքի, որի առկայու-
թիւնը կը նպաստի միաւորի առաւել աշ-
խոյժ գործունէութեանը: Խնդիրներից
մէկը սկսողական գոյքն է, որի բացա-
կայութիւնը հնարաւորութիւն չի տալիս
միաւորի աստիճանաւորական կազմին
աւելի յաճախակի կազմակերպել միա-
ւորային արշաւներ ու բանակումներ:

Միաւորի սկսողականները, ինչպէս ար-
դէն նշեցինք, տարազաւորուած են:

Կարծում ենք, որ յաճախակի համա-
տեղ միջոցառումները եւ փոխ ալցելու-
թիւնները Հ.Մ.Ը.Մ.ի որեւէ շրջանի հետ,
կը նպաստեն միաւորի աստիճանաւոր-
ական կազմի փորձի փոխանակման
ապահովմանը, առիթ կը հանդիսանան
սկսողականների համար նոր ընկերներ
ձեռք բերելուն, ինչպէս նաեւ լրացուցիչ
ազդակ կը լինեն աւելի լայն թափով
սկսողական աշխատանքների տարած-
ման համար:

BDF ••••

SUD S.A.L. AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



ՄԱՐՉԱՇԽԱՐՀԸ ԿԸ ՀԱՐՍՏԱՆԱՅ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ս. Ա.
ՊԷՅՐՈՒԹ

Աշխարհի տարածքին մեծ ժողովրդականություն վայելող մարտարուեստի խաղերէն քորէական թէքուանտոն 21րդ դարուն պատշաճեցնելու համար, ամերիկեան Սթէնֆորտ համալսարանին կարգ մը գիտնականները մշակած են դրուժիւն մը՝ հարուածներուն ուժը չափելու համար:

Դրուժիւնը կը գործէ մրցակիցներուն տարազին մէջ գետեղուած յատուկ սարքերու ճամբով:

Թէքուանտոն պաշտօնապէս կը խաղցուի 120 երկիրներու մէջ, աւելի քան 20 միլիոն անձերու կողմէ: Անոր ծագումը կապուած է աւելի քան 2000 տարի առաջ, Քորէայի մէջ կիրարկուած մարտական խաղերուն:

Մրցակիցները կէտեր կը շահին հարուածներ հասցնելով հակառակորդին մարմինին որոշ բաժինին:

Աւանդականօրէն, ասիկա ձգուած է դատական կազմի երեք անդամներու, որոնք կ'որոշեն, թէ հարուած մը ճշգրիտ եւ բաւարար ուժեղ է, որպէսզի իբրեւ կէտ նկատի առնուի:

Սթէնֆորտ համալսարանի Փարս Ալթօ հետազոտութեան կեդրոնին խմբակը հար-



մակարգիչի արհեստագիտութիւնը յարմարեցուցած է այս հին մարզախաղին:

Անոնք ստեղծած են մարմինը պաշտպանող սարք մը՝ Հոկու, ուր գետեղած են ճնշում «գգացող» անթել փոքր մեքենաներ՝ փիէզոնէկտրական նիւթեր գործածելով:

Փիէզոնէկտրական զգացող մեքենաները հարուածի մը ուժը կը վերածեն էլեկտրական նշանի մը, որ կը փոխանցուի լէւիթոփի կեդրոնի մը:

Գերարդիական Հոկուն, որ հանրութեան ներկայացուած է անցեալ տարի, մօտաւորապէս նոյնքան պիտի արժէ՝ որքան սովորական Հոկու մը:

Տոքթ. Էտ Չի ըսած է, թէ նոր դրուժիւնը կը գործէ իբրեւ յաւելեալ դատաւոր եւ ոչ թէ կը փոխարինէ դատական կազմը, թէեւ ան որոշ հար-

ցեր նախատեսած է:

Նոր արհեստագիտութիւնը կրնայ օգտագործուիլ նաեւ մարտական այլ խաղերու, ինչպէս՝ կուփամարտի պարագային:

Սակայն, դժուար եղած է արհեստագիտութիւնը ընդունիլ տալ սուսերամարտի նման աւանդական մարզախաղի մը պարագային:

Մասնագէտներու խմբակը ուզած է դրուժիւնը յարմարեցնել սուսերամարտին, որպէսզի մրցակիցները Ֆիզիքապէս կապուած չըլլան:

«Կը յուսայինք, որ անթել դրուժիւն մը սուսերամարտի մարզին մէջ յեղաշրջում պիտի կատարէ, սակայն անդրադարձանք, թէ այդ պարագային անիկա պէտք է իր օրէնքները փոխէ, գործածելու համար նոր արհեստագիտութիւնը», ըսած է տոքթ. Չի, որ թէքուանտոյի սեւ գօտի ունի:

ԿՈՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՍՔԵԹՊՈԼ

Գերարդիական նոր արհեստագիտութիւն մը յոյս կու տայ կոյրերուն՝ ցատկող զնդակ մը ձայնաւոր դարձնելով:

Նորագոյն արհեստագիտութիւնը մշակուած է Ճոնզ Հոփքինզ համալսարանին ճարտարագիտութեան երեք ուսանողներու կողմէ, որոնց երկուքը՝ Ալիսա Պըքհոլտըր եւ Աշաննա Ռանտոլ պասքեթպոլի աղջկանց խմբակին մաս կը կազմեն, իսկ երրորդը՝ Սթիւ Կարպըր մեքենական ճարտարագիտութեան ուսանող մըն է:

Չայն արձակող սարք մըն ալ գետեղուած է պասքեթպոլի կողովին ետեւը գտնուող տախտակին մէջ:

Հետազոտութիւնը հովանաւորող եւ կոյրերուն օժանդակող Մէրիլէնտի «Պլայնտինտասթրիզ Էնտ սըրվիսըզ» խմբակին առեւտրական





սպասարկութեանց պատասխանատուներէն Մայք Պուլիս յայտնած է, թէ շատեր կը սպասեն «ասոր նման բանի մը»:

«Կան կոյր մարզիկներ, որոնք լսելի գնդակ մը կ'ուզեն: Կան նաեւ երեխաներ, որոնք կրնան օգտուիլ ձեռքերու համակարգումէն, որ կու գայ գնդակ խաղալէն: Ներկայիս, կոյր երեխաներ կրնան գնդակով խաղալ, սակայն միայն եթէ անոնց հետ մէկը ըլլայ որ գնդակը գտնէ, երբ անիկա գլտորի», ըսած է Պուլիս, որ նոյնպէս կոյր է:

Կողովին ետեւի տախտակին մէջ գետեղուած դրուծիւնը կ'օգտագործէ ձայն սփռող փիէզոնեկտարական սարք մը, որ 9 վոլթնոց բարդով մը կը բանի, ղէպի դաշտ մերթ ընդ մերթ ձայներ ուղ-



ղարկելու համար:

Իսկ գնդակին մէջ ձայն արձակող փոքրիկ սարքը երեք վոլթնոց 5 բարդերով կը բանի: Գնդակը հետզհետէ ակելի բարձր ձայն կ'արձակէ:

«Գտանք, թէ իսկապէս դժուար է սարք մը գետեղել գնդակի մը մէջ, այնպիսի ձե-

ւով, որ անիկա գնդակին յատկանիշները չփոխէ», ըսած է ուսանողներէն Ռանտոլ: «Պէտք էր նկատի ունենալ ծանրութիւնը: Եթէ սարքը շատ ծանր ըլլայ, գնդակը անհրաժեշտ ձեւով չի ցատկիր եւ չի գլտորի», աւելցուցած է ան:

Հետեւաբար, մասնագէտները այլ ձեւ մը որդեգրած են: Անոնց նախատիպը կատարեալ չէ: Արձակուած ձայները երբեմն նեղացուցիչ են: Անոնք կրնան նաեւ ակելի օգտակար դառնալ, ըսած է Պուլիս, որ հակառակ այդ հարցերուն, կը մտածէ նորագոյն արհեստագիտութիւնը առաջարկել մարզական սարքեր արտադրող ընկերութիւններու, որպէսզի օգտագործեն ֆութպոլի եւ վոլիպոլի համար:

«Կը կարծեմ, թէ ի վերջոյ պիտի ունենանք լսելի գնդակ մը, որ մեծ օգտակարութիւն պիտի ունենայ կոյրերուն», շեշտած է ան:

(Օգտագործուած աղբիւրներ՝ «Պի. Պի. Սի.» եւ «livescience.com»)



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES



*Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
Tel: 02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՄԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ



Թղթակից ԱՆԹԻԼԻԱՄ

24 Մայիսին 1 Յունիս 2006, Տոկյոյի մէջ տեղի ունեցաւ պասքեթպոլի արաբական ակումբներու աղջկանց 13րդ ախոյեանութիւնը, մասնակցութեամբ՝ 8 երկիրներէ 9 խումբերու:

Լիբանան ախոյեանութեան մասնակցեցաւ երկու խումբով՝ Հ.Ֆ.Ը.Մ. «Անդրանիկ» (2005ի ախոյեան) եւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս (2005ի փոխ ախոյեան): Իւրաքանչիւրը խաղաց տարբեր խմբակի մէջ:

Ա. խմբակին մաս կազմեցին «ԱՀԻ» (Ա. Մ. Էմիրութիւններ), «Մահրէք» (Պահ-րէյն), «Ուահտէ» (Սուրիա), «Սիւլէյմանիէ» (Իրաք) եւ «Անդրանիկ» (Լիբանան): Բ. խմբակը բաղկացաւ հետեւեալներէն.- «Սփորթինկ» (Եգիպտոս), Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս (Լիբանան), «Օրթոտոքսի» (Յորդանան) եւ «Օլիմփիք» (Ալճերիա):

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս ունեցաւ բաւական ղեկավար մրցումներ: Թէեւ առաջին մրցումին ան յաղթեց Յորդանանի «Օրթոտոքսի»ին (70-55), սակայն Ալճերիոյ «Օլիմփիք»էն եւ Եգիպտոսի «Սփորթինկ»էն պարտութիւններ կրելով (65-40, 91-66)՝ ան դուրս մնաց ախոյեանութենէն:

Խումբը ախոյեանութեան մասնակցեցաւ մարզիչ Ժազ Նալպանտեանի հետ: Խումբին երկու «օտար»ները եղան Զարուհի Ալեքսանեան, Հայաստանի ազգային խումբէն, եւ Իգապէլ Օհանեան, Գերմանիոյ ազգային խումբէն: Խումբին մնացեալ անդամներն էին.- Սէնտի Սիմոնեան (խմբապետ), Գարօլին Մուֆարրէժ, Սանան Մարգարեան, Ալիք Թապաքեան, Ալին Լոշխաճեան, Քրիսթին Մուֆարրէժ, Սարին Գուլամճեան, Յոլինէ Գազանճեան, Նաթալի Սվաճեան եւ Սանտրա Նաժմ:

Հարկ է նշել, որ «Անդրանիկ» իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տիրացաւ ախոյեանութեան տիտղոսին: Աւարտականին, ան 76-59 արդիւնքով պարտութեան մատնեց Սուրիոյ «Ուահտէ»ն:

Կարպիս Գուլամճեան ԱԹԷՆՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի 62րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 4 Յունիս 2006ին, Աթէնք, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի «Աւետիքեան» սրահին մէջ:

Ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան, Աթէնքի եւ Գոքլինիոյ մասնաճիւղերու, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի իրաւասու ձայնով 17 ներկայացուցիչներ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրեալ 10 քոյր-եղբայրներ, որոնց կարգին՝ Հ. Յ. Գ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Հայկ Չիչէքեան, «Ազատ Օր» օրաթերթի խմբագիր Հռիփսիմէ Յարութիւնեան-Յագուպեան, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գուլամճեան, պատուոյ սկաուտապետ եղբ. Պերճ Գրիգորեան եւ շքանշանակիր եղբայրներ Օննիկ Շանկայեան եւ Կարօ Յովակիմեան:

Բարի գալուստի արտայայտութիւններով ժողովին բացումը կատարեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեան: Ան նշեց, որ ժողովին յաջող ու արդիւնաւոր ընթացքը պիտի ապահովուի առողջ քննարկումներու եւ մասնաւոր նշումներու ընդմէջէն, որպէսզի արժեւորուին նախորդ շրջանի փորձառութիւնները, որոնք երաշխիքը պիտի կազմեն ապագայի:

Ժողովի ղիւանի անդամներ ընտրուեցան եղբայրներ Պաղտիկ Գարապաճաքեան եւ Պօղոս Չոլաքեան՝ ատենապետներ, քոյր Արշալոյս Սամուէլեան ատենադպիր:

Բանաձեւի յանձնախումբի անդամներ ընտրուեցան քոյր Վերոնիկ Քիւրէճեան եւ եղբ. Յովհաննէս Ղազարեան, հաշուեքննիչ յանձնախումբի՝ եղբայրներ Օննիկ Շանկայեան, Օննիկ Փաթթուքեան եւ Արա Պատեղեան, իսկ արխիւային յանձնախումբի՝ եղբայրներ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ 62ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կարպիս Գոլյոմճեան եւ Պօղոս Տէր Արթինեան:

Ժողովականները վայրկեան մը յոտընկայս լուռթեամբ յարգեցին կեանքին յաւատարմութեամբ տուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան ժողովականներուն ուղղած իր ողջոյնի խօսքերէն ետք, նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանը անցնող շրջանին վերելք մը արձանագրեց: Մեծ իրագործում մը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ղրղ մարգախաղերուն յաջող կազմակերպումը, որ ակնկալութիւններ ստեղծեց ապագայի աւելի աշխոյժ եւ արդիւնաւէտ գործունէութեան, ինչ որ փաստեց թէ շրջանը կրնա՛յ աշխատանք տանիլ երբ պահանջուի: Ապագայի իմաստով ծրագրումները միշտ պէտք է կատարել ի մտի ունենալով գերագոյնը, յայտնեց եղբայրը:

Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամը՝ Հայկ Զիչէքեան դիտել տուաւ, որ միութեան առջեւ նոր հորիզոն մը բացուեցաւ եւ հարկ է գտնել ճիշդ ձևեր՝ զայն լաւագոյնս օգտագործելու հա-

մար: Հ.Մ.Ը.Մ. եղած է այն միութիւնը, որ մեր ազգային կեանքին առաջնահերթ հանգրուաններէն մէկը հանդիսացած է:

Շրջանի պատուոյ նախագահ եղբ. Կարպիս Գոլյոմճեան իր կարգին թելադրեց ժողովի աշխատանքներուն կատարմամբ ըլլալ իրատես, խուսափել կրկնութիւններէ եւ մտածել գտնել պահանջները գոհացնող այն միջոցները, որոնք կրնան օգտաշատ հանդիսանալ միութեան ապագայ գործունէութեան յաջողութեան:

Պատուոյ սկսուտապետ եղբ. Պերճ Գրիգորեան, աշխատանքներուն յաջողութիւն յայտնելով, անդադարձաւ ու գնահատեց շրջանի երկար տարիներու արխիւներն ու նկարները եղբօր մը յարատեւ ջանքերով բնախնդրութեամբ ու խնամքով պահուած ըլլալը:



Նորդանճեան:

Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղերու վարչութիւններուն մօտ ներկայացուցիչներ նշանակելով՝ հետամուտ եղած է անոնց աշխատանքներուն հեղափոխական ընթացքին: Գաղութէն ներս գործող միութիւններուն եւ մարմիններուն հետ պահած է յարաբերական կապեր, իր մասնակցութիւնը բերելով դադարի հիմնական ձեռնարկներուն:

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ը Աթէնքի, Գոքինիոյ եւ Սելանիկի մասնաճիւղներուն մօտ կը պահէ ֆութպոլի երէց եւ փոքրերու, պասթիպոլի մանչերու զոյգ եւ վոլեյպոլի, լողի եւ ճատրակի մանչերու խումբեր: Ֆութպոլի, պասթիպոլի եւ վոլեյպոլի խումբերը կը մասնակցին իրենց շրջաններու մրցաշարքերու պաշտօնական խաղերուն:

Անցնող շրջանին, իւրաքանչեւ իր եղած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ղրղ մարգախաղերուն կազմակերպումը: Մարգախաղերուն մասնակցած են 10 շրջաններէ 350է աւելի Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ-մարզիկուհիներ եւ վարչական պատասխանատուներ:

Մարգախաղերուն կազմակերպման հսկայական աշխատանքները կատարուած են մեծ խանդավառութեամբ, զգալի ոգեւորութիւն ստեղծելով գաղութին մօտ:

Մարգախաղերու բացման ու փակման հանդիսութիւններուն եւ կատար-



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան ժողովին կը փոխանցէ իր խօսքը:




լած մրցումներուն մարզասէր մեծաթիւ հանդիսականներու ներկայութիւնը գրաւականը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի իւրաքայտուկ եւ գնահատելի այս աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդը Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերուն մօտ կը պահէ 180 սկաուտ, արենոյշ, գայլիկ, արծւիկ, պարման ու պարմանուհիներ, որոնց կողքին կը գործեն ու անոնց աշխատանքներուն կը հսկեն սկաուտական ծնողական խորհուրդները:

Խումբերը ունին թմբկահարներու իրենց խմբակը:

Սկաուտական խումբերը կ'ունենան իրենց դաստիարակչական, դասախօսական, աշխատանքային, գիտելիքներու եւ ազգային-կրօնական հարցերու շուրջ հաւաքոյթներ եւ դպրոց-սեմինարներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Կազմակերպած համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումին Յունաստանի շրջանը իր մասնակցութիւնը պիտի



Եղբ. Կարպիս Գոյումճեան ժողովին կը փոխանցէ իր խօսքը:

բերէ 20 սկաուտ-արենոյշներով:

Այս միջոցին, միութեան «Մարզիկ» պաշտօնակիցներին մօտ շրջանի աշխատակցութիւնները կը շարունակէ կատարել եղբ. Կարպիս Գոյումճեան:

Ժողովը լսելէ ետք արխիւային եւ

հաշուեքննիչ յանձնախումբերուն գեկուցումները, անցաւ իր օրակարգին քննարկման: Օրակարգը կ'ընդգրկէր կազմակերպչական, դաստիարակչական, սկաուտական, մարզական, տընտեսական, նախահաշիւի եւ չնախատեսուած հարցեր, որոնց աւարտին տեղի ունեցաւ հնգանդամ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Ընտրուեցան քոյր Վերոնիկ Քիւրէքճեան եղբայրներ Պօղոս Չորաքեան, Կարպիս Ճանիկեան, Արա Պատեւեան եւ Վահան Քէօսէեան:

Ժողովի աշխատանքներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբայրը շնորհաւորեց նորընտիր Շրջանային Վարչութիւնը, մաղթելով բոլորել յաջող շրջան մը:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի 62րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը վերջ գտաւ եղբայրական սիրալիր մթնոլորտի մէջ, ժողովականներու յոտնկայս «Յառաջ նահատակ» քայլերգով:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



«ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ, ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՆԻԹՈՎ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

13 -15 Յունիս 2006ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը իր մասնակցութիւնը բերաւ «Երիտասարդութիւն, իրականութիւն, հեռանկարներ» նիւթով երիտասարդական խորհրդաժողովին, որ կազմակերպուած էր Հայաստանի Երիտասարդական Ձեռնարկներու կազմակերպման կեդրոնին եւ Փինանսաւորուած՝ մշակոյթի եւ երիտասարդական հարցերու նախարարութեան կողմէ:

Խորհրդաժողովին նպատակն էր նպաստել Հայաստանի մէջ երիտասարդական հասարակական կեանքի ստեղծման, խթանել երիտասարդութիւն-պետութիւն, երիտասարդութիւն-միջազգային կազմակերպութիւններ կապերը, թափ տալ երիտասարդական միութիւններու միջեւ գործակցութեան, քննել երիտասարդութիւնը յուզող հարցերը եւ լուծումներ որոնել անոնց:



Խորհրդաժողովի աշխատանքներու կարգին, տեղի ունեցաւ «Մտքերու տօնավաճառ» անունով ցուցահանդէս, որուն մասնակցեցան Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի երիտասարդական կազմակերպութիւնները: Ցուցահանդէսը մասնակիցներուն առիթ տուաւ ներկայացնելու իրենց իրադրութած ծրագիրները, աշխատանքային առաջնահերթութիւնները եւ հեռանկարները: Ցուցահանդէսին մասնակիցներուն տրամադրուեցան տաղաւարներ, ուր անոնք ցուցադրեցին իրենց աշխատանքները ներկայացնող զանազան իրեր:

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՌՕՐԵԱՅԷՆ



1 Յունիսին տեղի ունեցաւ այցելութիւն Եռաբլուր, ուր գայլիկներն ու աստիճանաւորները յարգանքի տուրք մատուցեցին նահատակ եղբ. Վարդան Բախշեանի յիշատակին:



Դարձեալ, 1 Յունիսին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի գայլիկներն ու աստիճանաւորները այցելեցին ներքին Ձէյթունի մանկատուն, որ անցուցին հաճելի եւ դաստիարակիչ պահ մը:



25 Յունիսին, Մուղնիի մէջ տեղի ունեցաւ Մեարոպ Արք. Աջճեանի յուշարձանին բացումը: Սկաւառներ իրենց մասնակցութիւնը բերին բացման արարողութեան:



ՄԱՆԹԱ ԳԼԱՐԱՅԻ «ԱՆԻ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ 15ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ՄԱՆԹԱ ԳԼԱՐԱ

ՀՄԸՄ-ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղին հիմնադրութեան 15րդ տարեդարձը տօնուկեցաւ մեծ խանդավառութեամբ: Պահանգնորդ-ճաշկերոյթը տեղի ունեցաւ 13 Մայիսին, Սան Յրանսիսքոյի Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ:

Տօնակատարութեան ներկայ էին Անուշաւան Ծ. Վրդ. [ալմժմ՝ եպս.-«Մ.»] Դանիէլեան: Տաթև Քհնյ. Յարութիւնեան, Աւետիս Քհնյ. Թորոսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան նախկին ատենապետ եղբ. տղթ. Միսաք Արզումանեան, Կեդրոնական վարչութեան նախկին փոխ ատենապետ եղբ. Ժիրայր Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ.Նահանգներու Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իսթենճեան եւ Շրջանային վարչութեան անդամ եղբ. Արման Քիլիճեան:

Օրուան հանդիսավարներն էին եղբ. Շահէ Ենիգոմիչեան եւ քոյր Լեւա Մանուկեան, որոնք ձեռնհասօրէն կատարեցին իրենց աշխատանքը: Յայտագիրը ունէր չորս կարեւոր բաժին.-

Ա. գնահատանք եւ պարգեւատրում մասնաճիւղի հիմնադիր եւ վաստակաւոր եղբայրներու: Բեմ հրաւիրուեցան հիմնադիր եղբայրներ Հրայր Թաշճեան, Վահէ Պարոնեան եւ Շահիկ Աղապապեան, որոնց շքանշաններ յանձնեցին Տաթև Քհնյ. Յարութիւնեան, եղբայրներ Միսաք Արզումանեան եւ Ժիրայր Սարգիսեան: Այս առթիւ խօսքեր արտասանեցին Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան, Տաթև Քհնյ. Յարութիւնեան, եղբայրներ Միսաք Արզումանեան, Ժիրայր

Սարգիսեան եւ Յակոբ Ստեփանեան: Բոլորն ալ գնահատեցին «Անի» մասնաճիւղին տարած աշխատանքները եւ յաջողութիւն մաղթեցին յառաջիկայ տարիներուն համար:

Մասնաճիւղին կողմէ եղբայր Վազգէն Արզումանեան փոխանցեց վարչութեան խօսքը: Ան նշեց, որ ազգային արժեքներու հաւատարիմ, անոր տեսչերուն իրականացման համար գինուորագրուած Հ.Մ.Ը.Մ-ը սերունդներ հասցնելով եւ մարդացնելով դարձաւ ազգին ապագան կերտող վստահելի գործադաշարը: (խօսքին ամբողջութիւնը տեսնել քովի էջը):

Բ. Երկրորդ բաժինով, մասնաճիւղին սկառտները տողանցելով մտան սրահ եւ երգեցին «Յառաջ նահատակ»ը: Տեղի ունեցաւ երգման արարողութիւն եւ աստիճանատուութիւն:

Գ. Տեղի ունեցաւ սահիկներու ցուցադրութիւն: Ներկաները մասնակից դարձան եւ ծանօթացան մասնաճիւղին 15 տարիներու կեանքին, առաջին վարչական կազմէն մինչեւ սկառտական, մարզական, ընկերային ներկայ գործունէութիւնը եւ արձանագրուած յաջողութիւններուն:

Դ. Տեղի ունեցաւ 15ամեակի կարկանդակի հատում, ընդհանուր ծափահարութիւններու եւ բարեմաղթութիւններու ընկերակցութեամբ: Պաշտօնական բաժինէն ետք, հայկական նուագախումբի եղանակներով ներկաները պարեցին ու զուարճացան մինչեւ ուշ գիշեր:



ՄԻԱՅՆ ՀԱՒԱՏՔՈՎ ԿՐՆԱՆՔ ՀՈՍԱՆՔՆ Ի ՎԵՐ ՄԱՔԱՌԻԼ

(ՍԱՆԹԱ ԳԼԱՐԱՅԻ «ԱՆԻ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 15ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ,
ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱԶԳԻՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ)

Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճյուղի վարչությունը գովելի մտածումով մը այսօրուան հաշու պարի երկույթը ձևաձև է մասնաճյուղի հիմնադրութեան տասնհինգերորդ տարեդարձին, եւ ուզած է նախքան խրախնամքի բաժինը, անդամներով ու համակիր շրջանակով վերլուծել իր հայանքներ գործն ու վաստակը, եւ անգամ մը եւս մտաբերել ու յիշեցնել Հ.Մ.Ը.Մ.ի մարդակերտ ու ազգաշէն նպատակները:

Յորելեական նման հանդիսութիւններ կը ծառայեն նաեւ տուեալ կազմակերպութեան մը իրագործումներու բնոյթն ու տարողութիւնը լուսարձակի տակ բերելու, եւ իր գաղափարաբանութեան ու հիմնական նպատակներուն ուղեցոյց առաջնորդութեամբ, ճշդելու ներկայի ուղիները, ծրագրելու ցանկալի ապագան:

Տակաւին պատանի տարիքիս, սկառառական հանդէսի մը ընթացքին, բեմէն լսեցի պատասխանատու Հ.Մ.Ը.Մ.ականի մը հետեւեալ արտայայտութիւնը. «Հ.Մ.Ը.Մ.ը ոչ միայն անցեալ է կամ ներկայ, այլ ան է նաեւ ապագայ: Այդ երեքը իրարու կապող ներուժ ոգեկանութիւն»:

Այդ օրերուն լրիւ չըմբռնեցի ըստածը: Բայց ժամանակին հետ հասկցայ, որ ազգային արժէքներու հաւատարիմ, անոր տենչեան իրականացման համար գիւտարարութեամբ մեր միութիւնը, իրօք, սերունդներ հայացնելով եւ մարդացնելով դարձաւ ազգին ապագան կերտող վստահելի գործադաշտ:

Այո, անցեալ է Հ.Մ.Ը.Մ.ը, ազգին համար նակատագրական օրերուն իրականացած իր ծնունդով, անցեալ է բնօրրանին մէջ, եւ ապա՝ սփիւռքացած ժամանակաշրջանին ունեցած փառակերտ իրագործումներով, որոնցմով երաշխաւորուած է ներկան, իր կառոյցով, բարոյադասան եւ պահանջատեր հաւատամքով, ազգին տեսիլքները իւրացնելու եւ կենսագործելու հրահանգով, իրեն աւանդ հասած կտակագրով մը: Վերոգրեալ տողերով ուրուագծուած անցեալը, կ'ենթադրեմ, ծանօթ է բոլորիս: Իսկ ներկան, կը կառուցենք նաեւ մենք՝ «Անի» մասնաճյուղը, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին աշխատանքներուն բերած համեստ, բայց գնահատելի մասնակցութեամբ: Այսինքն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին հովանաւորութեամբ ձեռք բերուող երախտիքին բաժնեկցելով:

Պահը այս գիշեր թոյլ չի տար մանրամասնել վերոնշեալ հաստատումները: Օրինակ, վերլուծել Հ.Մ.Ը.Մ.ի Ապրիլեան իւրայատուկ ոգեկան երկիւնը, բացատրել ազգային պահանջատեր դաւանանքը, բայց կը կարծեմ որ այդ գաղափարաբանութեան ուղեկիշներուն հետեւելով, ազգին Ապրիլեան թե Հայրենիքի հիմնահարցերուն լուծման համար ըլլալ պատենշի վրայ, դրօշակիր ըլլալ Ղարաբաղի պահանջատեր դատին, նորանկախ Հայրենիքի հզօրացման եւ պաշտպանութեան արդարապահանջ հարցերուն: Ան նաեւ յանձնառու պիտի ըլլայ Սփիւռքի գոյատեւման համար ազգային կառոյցներու առաւել ծաւալումին ու զօրացման, Հայրենիք-Սփիւռք համախոնական յանձնառութիւններով կազմուած ընդհանրական ծրագրին աշակցութեան:

Վերադառնալով անցեալ-ներկայ-ապագայ գոյակցական իրավիճակներուն, կ'ըսենք.-

Մեր բոլորին ծանօթ անցեալէն վերջ, ուրախ ենք որ ներկան կը կառուցուի այս օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին աշխատանքներով, եւ «Անի» մասնաճյուղին ալ համեստ, բայց անզանցելի բաժինով:

Կը հաւատանք, որ «Անի» մասնաճյուղը իր տասնհինգամեակի յիշարժան այս ձեռնարկով կու գայ ըսելու, որ հպարտ է իր 15 տարիներու վաստակով, եւ միութեան «Բարձրացի ր-բարձրացուր» անկրկնելի նշանաբանին ունկնդիր, պիտի շարունակէ միութեանուեր գործը, ի փառս հայտուն եւ Հայաստանին:

Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճյուղին ապագան կը տեսնենք փայլուն, տրուած ըլլալով որ ունինք հաւատաւոր հայեր, որոնք կը հաւատան Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ անոր տարած աշխատանքին կարեւորութեան: Միայն հաւատքով կրնանք հոսանքն ի վեր մաքառիլ եւ գոյատեւել:

Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճյուղը կը խոստանայ շարունակել այս գործը եւ ծառայել Սանթա Գլարայի հայ գաղութին, քաջ գիտնալով որ գործը դիւրին չէ: Բայց կը հաւատանք, որ գաղութը զօրավիզ պիտի կանգնի մեր աշխատանքներուն եւ միասին պիտի դիմագրաւենք մարտահրաւերները:

Այս խոհերով բաւարարուելով, մեր սիրելի մասնաճյուղին յորելեանին առօրէ, գնահատանքի խօսք ունինք մասնաճյուղին հիմնադիրներուն, իրերայաջորդ կերպով վարչութեան թէ յանձնախումբերու անդամ եղած քոյր-եղբայրներուն եւ, անշուշտ, այս գեղեցիկ ձեռնարկը կազմակերպողներուն:

Պատիւ այս օրերուն գործ ստանձնած պատասխանատու քոյրերուն եւ եղբայրներուն, յաջողութիւն Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճյուղին:



«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԳԱՆԱՏԱՅԻ ՄԵՉ



Մասնաճիղի ատենապետ եղբ. Տիրան Ծահինեան եւ Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսպեան:

Տիրան Ծահինեան ՄՈՆԹՐԷԱԼ

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեանի հովանաւորութեամբ եւ տէր եւ տիրկին Արթօ եւ Այլս Մարգարեաններու նախագահութեամբ, Կիրակի, 16 Յուլիս 2006ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան»

սրահին մէջ մեծ շուքով տօնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարգիկ» ամսաթերթի հրատարակութեան 25ամեակը, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Երջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի «Կամք» մասնաճիղի վարչութեան, ներկայութեամբ Սուրէն Արք. Գաթարոյեանի, Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանի եւ Գառնիկ Քհնյ. Գոյունեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Տէր

Ը.Մ.ականներու: Տօնակատարութիւնը սկսաւ դրօշակակիրներու մուտքով, առաջնորդութեամբ՝ մասնաճիղին շեփորախումբին, որ նուազեց «Յառաջ նահատակ», Գանատայի եւ Հայաստանի քայլերգները: Օրուան հանդիսավար քոյր Հուրի Հայրապետեան ընդհանուր գիծերով օրուան նպատակը փոխանցելէ ետք, անցաւ յայտագիրի գործադրութեան, բեմ հրաւիրելով մասնաճիղի ատենապետ եղբ. Տիրան Ծահինեանը, որ մասնաճիղի վարչութեան անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք գաղափարը յղացան եւ իրականացուցին «Մարգիկ»ի ծնունդը, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք թղթակցութիւններով, յօդուածներով եւ հրապարակագրական էջերով օժանդակեցին «Մարգիկ»ի հրատարակութեան:



Պարգևատրեալներու յիշատակի նկար օրուան նախագահին եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին հետ:

Մարգիսեանի, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Վաղարշ Էհրամեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Երջանային Վարչութեան, ինչպէս նաեւ պատկան մարմիններու, միութիւններու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ մօտ 200 Հ.Մ.

Բացման խօսքէն ետք, ներկայացուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը. բուրգերու կազմութիւն՝ ֆուլթայլի կրտսերներու խումբի անդամներով (եղբ. Ճորճ Պալէոգեանի

պատրաստութեամբ), «Ուզուն տարա» եղանակով մենապար մը՝ քոյր Մարի Յովհաննէսեանի կողմէ: Ապա, քոյր Դալար Յակոբեան դաշնակի վրայ եւ եղբ. Արա Յակոբեան ջութակով նուագեցին երաժշտական երկու կտոր, Կոմիտասէն «Մարերի վրով գնաց» եւ իտալական ժողովրդային երգ «Come to Sorrinto», մեծապէս տպաւորելով ներկաները:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շըրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսայեան: Եղբայրը անդրադարձաւ դժնդակ պայմաններու մէջ «Մարգրիկ»ի ծնունդին եւ, հակառակ բոլոր դժուարութեանց, քառորդ դարու կեանք ունեցող պաշտօնաթերթին, որ թարգմանը հանդիսացաւ միութեան գործունէութեան: Եղբ. Պուրսայեան լուսարձակի տակ առաւ «Մարգրիկ»ի ունեցած ներդրումը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի



Բուրգի կազմութիւն:

գործունէութիւնը ցոյցացնող հայելի, հեռաւոր շրջաններու միջեւ կապեր հաստատող, հայր հայ պահող, յօգուածներու եւ յուշագրութիւններու տեղ տուող հրատարակութիւն:

Շըջանային Վարչութեան ատենապետին խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան կատարեց յուշանուէրներու փոխանցում՝ երկար տարիներ

Գանատայի շրջանէն «Մարգրիկ»ին աշխատակցած եղբայրներ Լեւոն Պէնկեանի, Մոսիկ Թոփուգեանի եւ Տիրան Շահինեանի:

Ապա, եղբայրը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան խօսքը: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մէջ «Մարգրիկ»ի ունեցած դերակատարութեան՝ աշխարհասփիւռ մասնաճիւղերը իրարու օղակելու, միութեան գործը ծանոթացնելու եւ անոր խօսքը տարածելու առաքելութեան: Եղբայր Տէր Սարգիսեան Գանատայի շրջանի «Մարգրիկ»ի բաժանորդներու թիւին անդրադառնալով, ներկաները հրաւիրեց թիկունք կանգնելու թերթին նիւթական եւ բարոյական վերելքին, որպէսզի ան շարունակէ առաքելութիւնը՝ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի հայելին եւ անոր շունչն ու ոգին փոխանցողը:

(Շար.ը՝ էջ 40)

'Made from one single slice of natural Australian opal'

Classique

OPAL DIAL WATCH



Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.

123 Clarence Street

Sydney 2000

Australia

Phone: +61 2 9290 2199
 fax: +61 2 9262 1630
 Website: www.classiquewatches.com
 Email: Info@classiquewatches.com



Շրջանային Ներկայացուցչական ԺԵ. Ժողովի կազմը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գեորգ Կարապետեանի, Գառնիկ Մկրտիչեանի, Պատրիկ Կիլպէնկեանի եւ Կարպիս Գապասազալեանի հետ:

Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանը գումարեց իր Շրջանային Ներկայացուցչական 15րդ ժողովը եւ երկօրեայ նիստերով արժեւորումը կատարեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկուքուկէս տարիներու գործունէութեան:

Ժողովին ներկայացուեցաւ ընդարձակ տեղեկագիր մը, որմէ քաղուածաբար կը ներկայացնենք կարգ մը բաժիններ:

Յայտնենք, որ Շրջանային Ներկայացուցչական 15րդ ժողովի աւարտին ընտրուեցաւ իննսանդամ նոր Շրջանային Վարչութիւն: Դիւանի կազմութեան էն եւ աշխատանքներու բաժանումէն ետք, Շրջանային Վարչութիւնը պարզեց հետեւեւեայ պատկերը:-

Ատենապետ.- եղբ. Բաֆֆի Տէր Արքահամեան.

Ատենադպիր.- քոյր Լիլա Լալիեան. Գանձապահ.- եղբ. Մովսէս Քէօշկէրեան.

Հաշուապահ եւ մարպականի պատասխանատու - եղբ. Շահէ Չաղլասեան.

Փոխ ատենապետ.- եղբ. Աբրահամ Եագուպեան.

Գոյքապահ եւ սկաուտականի պատասխանատու.- եղբ. Արմէն Քէօշկէրեան.

Խորհրդականներ.- Եղբայրներ Մըկրտիչ Գրիգորեան (Գամիշի), Աբրահամ Աստուրեան (Լաթաքիա) եւ Սարգիս Քիրտեան (Գամասկոս):

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԸ ԱՆՑՆՈՂ ԵՐԿՈՒՔՈՒԿԷՍ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄ

Անցնող երկուքուկէս տարիներուն, 21 Սեպտեմբեր 2003էն 14 Մայիս 2006, Սուրիոյ շրջանը ունեցաւ Շրջանային Վարչութեան հետեւեւեայ կազմը:-

Եղբ. Պօղոս Պալէոզեան.- ատենապետ եւ «Մարզիկ»ի պատասխանատու.

Եղբ. Անդրանիկ Աւընեան.- փոխ ատենապետ եւ գոյքապահ.

Քոյր Մարալ Տիբալիբեան.- ատենադպիր.

Եղբ. Խաթակ Տիբալիբեան.- փոխ ատենադպիր, [Թղթակցութեանց պատասխանատու եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի կապ.

Եղբ. Մովսէս Քէօշկէրեան.- գանձապահ.

Եղբ. Մանուկ Գազէլեան.- հաշուապահ եւ մարզականի պատասխանատու.

Եղբ. Աւօ Աճէմեան.- Դամասկոսի մասնաճիւղի ներկայացուցիչ.

Եղբ. Նազարէթ Խալոյեան.- Լաթաքիոյ մասնաճիւղի ներկայացուցիչ.

Եղբ. Յակոբ Մկրտիչեան.- Գամիշլիի մասնաճիւղի ներկայացուցիչ.

ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ՀԵՏ ԿԱՊ

Մասնաճիւղերու վարչութիւններուն հետ յարաբերութիւնը եղած է ներկայացուցչութեամբ, նամակագրութեամբ, հեռաձայնային հաղորդակցութեամբ եւ հանդիպումներով:

Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչները ներկայ գտնուած են մասնաճիւղերու անդամական ընդհանուր ժողովներուն.-

6 Փետրուար 2004.- Դամասկոս.

8 Փետրուար 2004.- Գամիշլի.

28 Մարտ 2004- Քեսապ.

9 Մայիս 2004.- Լաթաքիա: Մասնաճիւղը ժողով չէ կրցած գումարել, առ այդ Շրջանային Վարչութիւնը 21 Մայիս 2004ին նշանակովի վարչութիւն յառաջացուցած է:

10 Հոկտեմբեր 2004.- Հայէպ.

23 Յունուար 2005.- Գամիշլի.

28 Յունուար 2005.- Դամասկոս.

30 Յունուար 2005.- Լաթաքիա.

30 Յունուար 2005.- Քեսապ.

18 Նոյեմբեր 2005.- Հայէպ.

23 Դեկտեմբեր 2005.- Գամիշլի.

15 Յունուար 2006.- Լաթաքիա.

27 Յունուար 2006.- Դամասկոս (Ա. նիստ)

28 Ապրիլ 2006.- Դամասկոս (Բ. նիստ): Մասնաճիւղի անդամական Ընդհանուր Ժողովը վարչութիւն չէ կրցած ընտրել, առ այդ Շրջանային Վարչութիւնը նշանակովի վարչութիւն յառաջացուցած է:

Բոլոր մասնաճիւղերը փակած են իրենց ցեղերը.

Հ.Մ.Ը.Մ.ի կանոնագրի տրամադրութիւններուն յարիր մնալու, միաժամանակ պետական ակումբ հասկացողութեան յարմարելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղին իրավիճակը անցնող շրջանին քննուեցաւ բազմիցս: Խորհրդաժողովներու եւ խորհրդակցութիւններու լոյսին տակ եզրակացուեցաւ հետեւեալը.-

Հայէպի մասնաճիւղը պահել մէկ մասնաճիւղ, անդամական մէկ ցանկով, որ կը գումարէ իր տարեկան ընդհանուր ժողովը, սակայն կ'ընտրէ երկու վարչութիւններ, որոնցմէ մէկը մասնագիտական առումով կը զբաղի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական Ֆետերէ խաղերով, իսկ երկրորդը՝ այլ մասնաճիւղերու նման կ'ունենայ իր սկաուտական շարքերն ու շեփորախումբը: Ան մարզական խումբեր կը յառաջանէ՝ նպատակ ունենալով խաղացողներ հասցնել շրջանի խումբերուն եւ հետզհետէ օտար մարզիկներէ զտել զանոնք:

Նիւթականի հարցը պիտի համադրուի համաձայն կարիքներուն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏ. ԽՈՐՀՈՒՐԳԻ ՀԵՏ ԿԱՊ

Շրջանային Սկաուտ. Խորհուրդի հետ յարաբերութիւնը ընթացած է ներկայացուցչութեամբ, նամակագրութեամբ եւ հանդիպումներով: Խորհուրդը իր շաբաթական հերթական նիստերու ատենագրութիւնները, խորհրդաժողովներու օրակարգը, ձեռնարկներու ծրագիրները եւ հաշուեկշիռները անյապաղ ձեռով փոխանցած է Շրջանային Վարչութեան:

ՅԱՆՉՆԱԵՈՒՄԵՐ

Շրջանային Վարչութիւնը իր գործունէութեան ընթացքին յառաջացուցած է ժամանակաւոր յանձնախումբեր՝ Հ.Մ.Ը.Մ.ի 85ամեակի ձեռնարկներու, ճաշկերոյթ-պարահանդէսի կազմակերպման եւ շրջանի ներքին կանոնագրի վերամշակման համար: Վերջինը տակաւին իր աշխատանքը չէ աւարտած:

85ԱՄԵԱԿԻ ՉԵՈՆԱՐԿՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղերու վարչութիւնները մղեց, որպէսզի շրջաններէն ներս լաւագոյն ձեւով նշեն միութեան հիմնադրութեան 85ամեակը: Առ այդ, Նոյեմբեր 2003ին տեղի ունեցան հետեւեալ ձեռնարկները.-

31 Հոկտեմբեր 2003 - 85ամեակի տօնակատարութիւն Դամասկոսի մէջ.

21 Նոյեմբեր 2003 - 85ամեակի պարահանդէս Լաթաքիոյ մէջ.

28 Նոյեմբեր 2003 - 85ամեակի տօնակատարութիւն Գամիշլիի մէջ.

29 Նոյեմբեր 2003 - 85ամեակի պարահանդէս Գամիշլիի մէջ.

30 Նոյեմբեր 2003 - 85ամեակի տօնակատարութիւն եւ ճաշկերոյթ Հայէպի մէջ.

Յիշեալ տօնակատարութիւններուն բանախօս հրաւիրուեցաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրիտչեան:

Նոյն առիթով, Շրջանային Վարչութիւնը հրատարակեց պառշիւր, որ բաժնուեցաւ բոլոր ձեռնարկներու ընթացքին:

Հայէպի եւ Գամիշլիի տօնակատարութիւններուն ընթացքին «Մառայութեան» շքանշանով պարգեւատրուեցան հետեւեալ քոյր-եղբայրները.-

Գամիշլիի մասնաճիւղէն՝ եղբայրներ Զաւէն Գասպարեան, Տիրան Խաչատուրեան եւ քոյր Արաքսի Արմենակեան: Հայէպի մասնաճիւղէն՝ եղբայրներ Նշան Օղիկեան, Միհրան Կարապետեան, Նուպար Սապուլունճեան, Սեդրակ Տօնականեան, Տիգրան Ժամկոչեան, Սահակ Աշճեան, Սերոբ Մերտիսանեան, Հրայր Մերտիսանեան եւ Սկրտիչ Դարիպեան: Կեդրոնական Վարչութիւնը ընդառաջելով Շրջանային Վարչութեան առաջարկին, Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» շքանշանով պարգեւատրեց եղբ. Առաքել Թերզեանը:

Շրջանային Վարչութիւնը 85ամեակը առիթ ծառայեցուց միութեան շարքերուն մէջ նոյն շրջանին պատժական





անօրինում ստացած անդամներուն ներում շնորհելու:

Շրջանային վարչութեան երկամեայ ծրագրին վրայ հիմնուելով, անցնող շրջանին տեղի ունեցան հետեւեալ ձեռնարկները.-

7 Նոյեմբեր 2003- միջ-մասնաճիւղային Ա. մարզախաղեր (պասքեթպոլ) Դամասկոսի մէջ:

27 Նոյեմբեր 2003- միջ-մասնաճիւղային Բ. մարզախաղեր (մինի ֆութպոլ) Գամիշլիի մէջ:

13 Օգոստոս 2004- շքերթ՝ Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, Քեսապի մէջ, մասնակցութեամբ Հալէպի, Քեսապի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերու սկաուտական կազմերուն եւ Հալէպի շեփորախումբին:

8 Նոյեմբեր 2004- այցելութիւն սկաուտական կազմերու, Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչին ընկերակցութեամբ:

12 Դեկտեմբեր 2004- Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան տարեդարձին առթիւ ճաշկերոյթ՝ «Արցախ» սրահին մէջ, ուր «Մառաշուկեան» շքանշանով պարգևատրուեցաւ եղբայր մը:

28 Մարտ 2005- միջ-մասնաճիւղային Գ. մարզախաղեր (պասքեթպոլ) Հալէպի մէջ:

28 Մարտ 2005- պարահանդէս՝ «Անի» ճաշարահին մէջ:

10 Յուլիս 2005- միջ- մասնաճիւղային Դ. մարզախաղեր (լող եւ ճատրակ) Լաթաքիոյ մէջ:

14 Օգոստոս 2005- շքերթ՝ Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, Քեսապի մէջ, մասնակցութեամբ բոլոր մասնաճիւղերու սկաուտական կազմերուն եւ Հալէպի ու Գամիշլիի շեփորախումբերուն:

12 Փետրուար 2006- Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահուան քառասունքի հոգեհանգիստ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որմէ ետք Շրջանային վարչութիւնը ցաւակցութիւններ ընդունեց «Վրացեան» կեդրոնին մէջ:

14 Մայիս 2006- Շրջանային Ներկայացուցչական ԺԵ. Ժողով:



Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Գեորգ Կարապետեան միութեան Ծրագիր-Կանոնագիրը կը յանձնէ Մուսուլի նորակազմ մասնաճիւղի ներկայացուցիչին:

Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍԻ ՍՈՒՐԻԱ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

18-25 Օգոստոս 2005ին, շրջանը ընդունեց Հ.Մ.Ը.Մ-Ֆրանսի ֆութպոլի խումբը, թիւով 17 եղբայրներ:

18 Օգոստոսին, երբ խումբը Հալէպ հասաւ, հիւրընկալուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղին կողմէ, Հ.Մ.Ը.Մ-ի պարտէզին մէջ: Յաջորդ առաւօտ, Շրջանային վարչութեան անդամներու ընկերակցութեամբ, խումբը մեկնեցաւ Քեսապ, այցելեց Քեսապի Համալիր, Ուսումնասիրաց վարժարան, Հ.Մ.Ը.Մ-ի էքզիզիուքի բանակավայր: Քեսապի բանակավայրը այդ օր տարբեր դոյն ստացաւ: Հայաբոյր Քեսապի բարձունքին վրայ ի մի խմբուած էին Սուրիոյ, Իրաքի եւ Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ-ականները, որոնք թէեւ տարբեր միջավայրերէ եկած, ընդելուզուած էին Հ.Մ.Ը.Մ-ի միջավայրին մէջ, դարձած էին մէկ՝ իրենց հոգիով ու մտածելակերպով: Անոնց լեզուները տեղ-տեղ կը տարբերէին իրարմէ, բայց հոգին նոյնն էր, հայ էին ու Հ.Մ.Ը.Մ-ական: Կարճ ժամանակի մէջ անոնք ընտելացած էին իրարու եւ, հին բարեկամներու նման, կողք-կողքի նստած, նոյն երգերն ու կանչերը կ'ընէին:

Երեկոյեան, խումբը շարժեցաւ դէպի Լաթաքիա, ուր Ս.Օ.Խաչի աղումբին մէջ հիւրընկալուեցաւ տեղւոյն վարչութեան կողմէ եւ արժանացաւ յատուկ յուշանուէրի:

Հալէպի մէջ, գրասալոյնիկական այցելութիւններու կողքին (բերդ, շուկաներ, խաներ եւ այլն) խումբը այցելեց Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարան, Ս.Օ.Խաչի ընկերա-բժշկական կեդրոն, Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցի եւ Ազգ. Առաջնորդարան, ուր ընդունուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ եւ լսեց անոր թելադրութիւններն ու քաջալերական խօսքերը: Ապա տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի ֆութպոլի խումբին հետ տեղի ունե-

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹԵԱՐ ՍՈՒՐԻԱՅ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

2005ին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան ընձեռած դիւրութիւններուն շնորհիւ, ինչպէս նաեւ իր նախաձեռնութեամբ, Սուրիոյ շրջանը դարձաւ այն «ոսկի կամուրջ», որ կարողացաւ ի մի խմբել տարբեր գաղութներու Հ.Մ.Ը.Մ-ականները, յաջողեցաւ ոգի ներշնչել, նոր թափ ու եռանդ տալ եւ, ինչու չէ, առիթ տուաւ միութենական բարձունք մը եւս նուաճելու:

ցաւ բարեկամական խաղ մը՝ Ռիայէթ էլ Շապապի դաշտին վրայ: Խաղը աւարտեցաւ Հայէպի խումբին յաղթանակով: Այսուհանդերձ, խումբը մարզական ոգիով ընդունեց իր պարտութիւնը եւ դարձեա՛լ հանդիպելու յոյս յայտնեց:

Ֆրանսահայ Հ.Մ.Լ.Մ.ականներուն երազն էր այցելել հայ ժողովուրդի նահատակութիւնը յուշող եւ ապրեցնող Տէր Զօրի եւ Մարկատէի ուխտավայրերը: Առանց նկատի ունենալու ամրան տօթը, 23 Օգոստոսին, անոնք ուխտաւորաբար մեկնեցան եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Ապրիլեան նահատակներու անշիրիմ գերեզմաններուն:

Իրենց կեցութեան վերջին գիշերը, Շրջանային Վարչութեան հրաւերով տեղի ունեցաւ ողջերթի երեկոյ՝ ձեմարանի պարտէզին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրբոյ ներկայացուցիչին, Սուրբոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդին եւ Հայէպի վարչութեան: Երեկոյին մասին ով որ լսած էր, փափաքած էր ներկայ գտնուիլ եւ այսպէս, նախկին հալչպահայեր Մ. Նահանգներէն, Սէլուտական Արաբիայէն, Փարիզէն եւ այլ գաղութներէ եկած էին Հ.Մ.Լ.Մ.ի տաքուկ բոյրը շնչելու եւ վերաթարմացնելու իրենց հոգին:

Երեկոյին ընթացքին տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում: Արտասանուեցան սրտառուչ խօսքեր:

Խումբը, 25 Օգոստոսին, բարձր տրամադրութեամբ վերադարձաւ Փարիզ՝ անգամ մը եւս հանդիպելու յոյսով:

ՄՈՒՍՈՒԼԻ ՄԱՍՆԱՃՅԻՂԻՆ Հ.Մ.Լ.Մ.Ի ԸՆՏԱՆԻՔԻՆ ՎԵՐԱՄԻԱՑՈՒՄԸ

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին եկաւ վերամիանալու Մուսուլի մասնաճիւղը, դառնալով անոր 97րդ մասնաճիւղը:

Արդարեւ, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ շրջանին տրուած էր այդ պատիւը՝ Մուսուլը կեդրոնին կապելու, վերամիացնելու:

21 Օգոստոս 2005ի առաւօտեան ժամը 11ին, Հայէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ այդ միացումը, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, անդամներ՝ եղբայրներ Ստեփան Տէր Պետրոսեանի, Պատրիկ Կիւլպէնկեանի, Կարօ Թիւթիւնճեանի, Գէորգ Կարապետեանի, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ մարմիններուն, Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի եւ Պաղտատի վարչութիւններուն, Ս.Օ.Խաչի եւ Համազգայինի ներկայացուցիչներուն եւ Հ.Մ.Լ.Մ.ական ու համակիր շրջանակին:

Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան խօսքէն ետք (արտասանուած՝ ատենապետ եղբ. Պօղոս Պալչոգեանի կողմէ), իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որմէ ետք բեմ հրաւիրուեցան Մուսուլի վարչութեան ներկայացուցիչը, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը եւ Զարեհ Քհնյ. Շաքարեան: Կեդրոնական

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net



Վարչութեան ատենապետը իր խօսքին մէջ կարեւոր նկատեց ընթերցել միութեան վերամիացման փափաք յայտնող Մուսուլի վարչութեան նամակը: Կեդրոնական Վարչութեան ուղղուած նամակը ցանկութիւն կը յայտնէր աւելի քան 30 տարուան ընդմիջումէ ետք վերամիանալ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, խոստանալով ամէն ջանք ի գործ դնել՝ իրականացընելու համար միութեան նպատակները, հաւատարիմ մնալով անոր Ծրագիր-Կանոնագիրին:

Քահանայ Հօր կողմէ կատարուած յատուկ արարողութեամբ տեղի ունեցաւ միութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական դրօշներու օրհնութիւն եւ երգման արարողութիւն: Դրօշները, Հ.Մ.Ը.Մ-ի Ծրագիր-Կանոնագիրին հետ յանձնուեցան Մուսուլի նորակազմ վարչութեան: Մուսուլի վարչութեան կազմին անունով խօսք առաւ վարչութեան ատենապետը, որ աւանդաբար ընտանիքէն բաժնուած եւ այսօր անոր վերագարձող զաւակի մը յանձնառութեամբ, անգամ մը եւս հաստատեց մասնաճիւղին պատրաստակամութիւնը՝ իր երդումով իսկ նուիրագործուած, ծառայելու ազգին, հայրենիքին եւ հաւատարիմ մնալու Հ.Մ.Ը.Մ-ի Ծրագիր-Կանոնագիրին:

Հ.Մ.Ը.Մ-ի ՅՈՒՇԱՔԱՐԱՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՏՅԻՐ ԶՕՐԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, մասնաճիւղերու եւ պատկան մարմիններու հետ գոր-



Սկաուտական շարքեր Հալէպի մէջ:

Ժակցաբար եւ Շրջանային Վարչութեան անմիջական օժանդակութեամբ, կարելի եղաւ իրականացնել Եղեռնի 90ամեակի ուխտագնացութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին միութեան Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Իրաքի, Քուէյթի եւ Հայաստանի մասնաճիւղերէն 345 քոյրեր եւ եղբայրներ:

Այս առիթով, ՏՅԻ Զօրի յուշահամալիրի բակին մէջ տեղի ունեցաւ յատուկ յուշաքարի բացման հանդիսութիւն (մամուրամասնութիւնները տեսնել «Մարգիկ»ի թիւ 278ին մէջ - «Մ.»):



Հ.Մ.Ը.Մ-ի Դ-ամասկոսի մասնաճիւղի սկաուտներ:

Հանդիսութեան Պաղտատի սկաուտական երգչախումբը իր փայլուն կատարողութեամբ արժանացաւ բոլորին գնահատանքին եւ քաջալերանքին: Այդ իսկ պատճառով, Շրջանային Վարչութիւնը քաջութիւնը ունեցաւ կազմակերպելու ելոյթ մը, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 2005ի երեկոյեան ժամը 9ին, «Լեւոն Շանթ» սրահին մէջ:

Տեղին է յիշել, որ Շրջանային Վարչութիւնը ընդունեց Պաղտատի մասնաճիւղէն 35 սկաուտներ եւ անոնց կեցութիւնը ապահովեց «Վրացեան» կեդրոնին մէջ: Խումբը իր մասնակցութիւնը բերաւ Հալէպի մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումին՝ Քեսապի մէջ:

ՆՈՐ ՄԱՄԱՆՃԻՂԵՐ

Ա.- Մեկնելով Շրջանային Ներկայացուցչական ԺԴ- ժողովի բանաձեւերէն, Շրջանային Վարչութիւնը ձեռնարկեց

Տէր Զօրի մէջ սկառուական շարժումի ստեղծման: Շարժումը ծնունդ առաւ 24 Դեկտեմբեր 2004ին եւ անցնող շրջանին, Շրջանային Սկառու-Խորհուրդի անմիջական հոգատարութեամբ, դանդաղ ու հաստատ քայլերով շարունակեց իր երթը:

Բ.- Եագուպիէի թաղականութեան առաջարկին ընդառաջելով եւ Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը առնելէ ետք, Շրջանային Վարչութիւնը 28 Ապրիլ 2006ին այցելեց Եագուպիէ, ուր հանդիպում մը ունեցաւ տեղւոյն թաղական խորհուրդին հետ: Վերջինը առաջարկեց Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական կորիզ մըն ալ յառաջացնել Եագուպիէի մէջ:

Առաջարկը քննարկման եւ ուսումնասիրման մէջ է:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Անցնող երկուքուկէս տարիներուն, Սուրիոյ Շրջանային



Սկառու- Խորհուրդը կատարած է հետեւեալ աշխատանքները:-

28 Փետրուար 2004.- ընթրիք՝ «Արցախ» սրահին մէջ, «Սկառուի Օր»-ուան առիթով.

30 Մայիս 2004.- մասնաճիւղերու Խորհուրդներու 7րդ խորհրդաժողով, Հայէպի մէջ.

20 Յունիս 2004.- մասնաճիւղերու խմբապետական սեմինար, բանակումի նախապատրաստական աշխատանքներու ծրագրով.

10-12 Սեպտեմբեր 2004.- միջ-մասնաճիւղային աստիճանաւորական եռօրեայ բանակում՝ Քեսապի մէջ.

26 Փետրուար 2005.- ընթրիք՝ «Արցախ» սրահին մէջ, «Սկառուի Օր»-ուան առիթով.

1 Մայիս 2005.- Սուրիոյ 14րդ խմբապետական ժողով, Հայէպի մէջ.

12 Յունիս 2005.- մասնաճիւղերու Խորհուրդներու դիւա-



Philippe Photo Trade

Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.



նական խորհրդաժողով, Հայլպի մէջ:

21 Նոյեմբեր 2005էն սկսեալ երկու շաբթուան տեւողութեամբ խմբապետական աստիճանի դասընթացը եւ ապա՝ աստիճանատուութիւն Հայլպէն 8, Քեսապէն 1, Գամիշլիէն 1 եւ Դամասկոսէն 1 քոյր-եղբայրներու:

17 Մարտ 2006-«Սկաուտի Օր»ուան առիթով խոստման արարողութիւն՝ Տէր Զօրի դայլիկական կորիզին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:

Շրջանային Սկաուտ. Խորհուրդը անցնող շրջանին հրատարակած է «Մոկլի»ի եւ «Սկաուտի Զայն»ի մէկական թիւ: Անոնց կողքին հրապարակած է պոռչիւրներ, որմագղներ, սփիքըներ, էջացոյցեր, պէներ, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձներու, Մեծ Եղեռնի, Մայիս 28ի, «Սկաուտի Օր»ուան եւ թարգմանչաց նուիրուած:

Հարկ է նշել, որ Շրջանային Վարչութիւնը միութեան Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրին կառչած մնալով՝ մերժեց թեկնածու խմբապետներու խմբապետի աստիճան տալ, առանց Վկայեալ կարգ ունենալու: Սակայն, Հայլպի եւ Գամիշլիի մասնաճիւղերու խմբապետի սուր անհրաժեշտութիւնը նկատի ունենալով, Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը առնելէ ետք, կազմակերպեց խմբապետի պատրաստման դասընթացը, եւ մասնաճիւղերը օժտեց խմբապետներով: Աւելի ուշ, մէկական խմբապետներով օժտուեցան նաեւ Քեսապի, Գամիշլիի եւ Դամասկոսի մասնաճիւղերը:



«Հայ Սկաուտի Օր» Գամիշլիի մէջ:

Կեդրոնական Վարչութիւնը այս շրջանին Սուրիոյ շրջանէն եղբ. Մանուկ Քէօշկէրեանը օժտեց Վկայեալ կարգով, յետ դասընթացի:

Փետրուար 2006ին, Սուրիոյ սկաուտական կեդրոնական մարմինէն ստացուած հրաւերով, եւ յետ խորհրդակցութիւններու, Հայլպի մասնաճիւղի սկաուտութիւնը իբրեւ պետական սկաուտական վաշտ արձանագրուեցաւ եւ իր ներկայացուցիչը ունեցաւ Հայլպի կեդրոնական խորհուրդին մէջ: Նման քայլ առնուած էր նաեւ Դամասկոսի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՐԶԱՒԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի մարզաւանի աշխատանքները կը տարուին յատուկ յանձնախումբի մը կողմէ:

«ՄԱՐԳԻԿ» ՊԱՇՏՆԱԹԵՐԹ

«Մարգիկ»ի ցրուումը դիւրացընելու եւ քանակը բազմացնելու մտահոգութեամբ, Շրջանային Վարչութիւնը բազմիցս թելադրած է մասնաճիւղերուն, որ յատուկ թղթակից նշանակեն եւ կատարուած ձեռնարկներու թղթակցութիւնները անյապաղ յղեն Շրջանային Վարչութեան:

ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Անցնող երկուքուկէս տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքը իր շարքերէն յաւելտ կորսնցուց 6 եղբայրներ:





Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍԻ ՄԿԱՌՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սեւան Նապարեան ՓԱՐԻՉ



Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական տարեկան բանակումը տեղի ունեցաւ Փարիզի շրջակայքը, Ֆրանսական սկաուտական կեդրոն՝ Ժամպլիլի մէջ, 8-14 Յուլիսի օրերուն:

50 սկաուտներ, արի-արենոյճներ, գայլիկ-արծուիկներ եօթը օրերու ընթացքին, «Ֆրանսայէն դէպի Հայաստան» թեմայով բանակումին, սկաուտական գիտելիքներու կողքին՝ տեղեկութիւններ ստացան Ֆրանսայի հայկական գաղութին եւ Հայաստանի մասին, ծանօթացան համակարգչային դրութեամբ հաղորդակցական միջոցներ ստեղծելու կարելիութեանց, նաեւ ստացան կրօնական եւ հոգեւոր դաստիարակութիւն:

Սկաուտական բանակավայր մը յարգարուած պիտի ըլլայ սկաուտական ձեռագիրն աշխատանքներով: Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի բանակավայրը ստացած էր այդ պատկերը, մուտքի դուռն ու կայմը, որուն վրայ կը ծածանէին սկաուտականի կողքին՝ հայկական ու ֆրանսական դրօշակները, բանակավայրին այլ հրապոյր մը տուած էին:

Համաձայն աւանդութեան, բանակումի աւարտին տեղի կ'ունենայ խարուկահանդէսը, որուն հրաւիրուած կ'ըլլան ոչ միայն ծնողներ, այլ նաեւ՝ բարեկամներ ու համակիրներ: «Այցելութեան Օր» անուան տակ երկարող օրուան ընթացքին, բանակողներու ծնողները մօտէն հետեւեցան իրենց փոքրերուն կատարած աշխատանքներուն, ականատես դարձան անոնց կատարած տողանցքին եւ սկաուտական արարողութիւններուն:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի շեփորախումբին առաջնորդութեամբ, յետմիջօրէին, սկաուտները համախմբուեցան եւ կատարեցին բանակումին վերջին դրօշակի արարողութիւնը: Կազմի խմբապետ եղբ. Պօղոս Մահպուտեան փոխանցեց իր խօսքը եւ բանակումի տիպար սկաուտներուն յանձնեց յուշանուէրներ: Յուշանուէր մը յանձնուեցաւ նաեւ այս տարեշրջանի տիպար սկաուտին:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան անունով ելոյթ ունեցաւ վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Սիսեռեան: Ան բարի գալուստ յայտնեց Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Լեոն Պաղտասարեանին եւ Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչին, որոնք իրենց ներկայութեամբ պատուած էին բանակումը:

Եղբայրը իր շնորհակալութեան խօսքը ուղղեց ծնողներուն, որոնք անվերապահօրէն իրենց գաւակները վստահած են Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքին, ու ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ. իր կարելին ի գործ պիտի դնէ ապագայ սերունդին հայեցի դաստիարակութիւն փոխանցելու համար: Եղբ. Սիսեռեան մատնանշեց, որ բանակումին մասնակցողներէն շատեր այս ամառ պիտի մեկնին Հայաստան, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը ներկայացնելու համար Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումին եւ հոսկէ ստացած իրենց գիտելիքները պիտի հարստացնեն հոն:

Եղբ. Սիսեռեան ներկաներուն ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզական աշխատանքներէն պասքէթի բաժինին գործունէութիւնը, որ այս տարի իր գործունէութեան մէջ ընդգրկած է փոքրերու խումբ մը: Եղբայրը նշեց, թէ կրտսերներու այս խումբը, որուն անդամները բոլորն ալ արիներ են, Ֆետերասիոնի կողմէ պարգեւատրուած է «տիպար խումբ»ի մետալով: Ան մետալները փոխանցեց բանակումին մասնակցող եղբայրներուն:

Հայկական եւ ֆրանսական քայլերգներով աւարտեցաւ յայտագիրին պաշտօնական բաժինը, որուն յաջորդեց զուտ սկաուտական համ ու հոտ ունեցող խարոյկը: Սկաուտական երգեր ու կանչեր, գաւեշտներ ու բանակումէն ծնունդ առած կատակներ ճոխացուցին միջնորդը:

Խորովածի թէ խարոյկի կրակին տարածած բոյրին մէջ, ներկաները, 14 Յուլիսին, Ժամպլիլի բանակավայրին մէջ անցուցին հաճելի պահեր:

Խորովածի թէ խարոյկի կրակին տարածած բոյրին մէջ, ներկաները, 14 Յուլիսին, Ժամպլիլի բանակավայրին մէջ անցուցին հաճելի պահեր:

www.homenetmen-france.com
www.homenetmen-france.com
www.homenetmen-france.com
www.homenetmen-france.com
www.homenetmen-france.com
www.homenetmen-france.com

ՀԵՔԻԱԹ

ԲԻՒՐԱՊԱՏԻԿԸ

**Պատրաստեց՝ Սալբի Լատոյեան
ՊԷՅՐՈՒԹ**

Այս հեքիաթին առաջին մասին մեջ ծանօթացանք մարդու մը եւ կնոջը, որոնք բարեպաշտ էին: Մարդը ամէն օր եկեղեցի կ'երթար եւ մէկ ոսկի կու տար, քահանան ալ անոր կը խոստանար, թէ Բիւրապատիկը վաղը մէկուն տեղ հագար կու տայ քեզի:

Օրին մէկն ալ, մարդուն դրամները կը վերջանան եւ ան կ'ուզէ դիմել Բիւրապատիկին: Ճամբայ կ'ելլէ եւ համբուն ընթացքին նախ կը հանդիպի գողերու, ապա ծերունիի մը, որոնք լսելով իր պատմութիւնը՝ իրենք ալ խնդրանքներ կը ներկայացընեն Բիւրապատիկին:

Հեքիաթը կը շարունակուի:



ետք կը հանդիպի մարդու մը, որ նստած էր ոսկիէ աթոռի մը վրայ, կը մօտենայ անոր եւ կ'ըսէ.

- Բիւրապատիկը դո՞ւն ես:

- Այո, է՛ս եմ, ի՞նչ կ'ուզես:

- Մեր քահանան զրկեց ինձի, ես քեզի մէկ ոսկի տուած եմ, դուն ինձի հազար պիտի տաս:

- Կ'երթաս տուն, բակիդ մէջ թուփի ծառ մը կայ, կը փորես անոր տակը եւ կարասով ոսկի կը գտնես հոն:

Մեկնելէ առաջ, մեր հերոսը Բիւրապատիկին կը հարցնէ ի՞նչ որ իրմէ խնդրած էին քառասուն գողերը, ծերունին եւ պարտիզպանը: Բոլորին պատասխանները առնելէ ետք՝ ճամբայ կ'ելլէ դէպի տուն:

Կը հասնի պարտիզպանին քով, կ'ըսէ.

- Պարտէզիդ պատերը քանդէ, որպէսզի անցնող-գացողները համեղ պտուղներդ համտեսեն եւ այն ատեն պարտէզդ միշտ կանաչ մնայ:

Պարտիզպանը անմիջապէս կը քանդէ պարտէզին պատերը եւ պարտէզը կը կանաչնայ:

Մարդը կ'երթայ ծերունիին քով եւ կ'ըսէ.

- Որքան ատեն որ Աստուծոյ անունը բերանդ կ'առնես քարէն ոսկի պիտի բխի:

- Կարելի՞ է Աստուծոյ անունը բերնէն պակսեցնել, փա՛ռք Աստուծոյ, կ'ըսէ մարդը եւ այս անգամ քարէն շատ աւելի ոսկի կ'ելլէ:

Կը հասնի գողերուն քով եւ կ'ըսէ.

- Երբ ա՛լ գողութիւն չ'ընէք, երկիրքին մէջ տեղ կ'ըլլայ ձեզի:

- Գողերը անմիջապէս կը ձգեն ամէն ինչ եւ կ'երթան իրենց տուները:

Մարդը անօթի-ծարաւ կը շարունակէ իր ճամբան եւ կը հանդիպի պարտիզպանի մը:

- Ո՞ւր կ'երթաս, կը հարցնէ պարտիզպանը մարդուն:

- Բիւրապատիկին քով,- կը պատասխանէ մարդը,- մէկ տուած եմ հազար պիտի տայ ինձի:

- Երբ որ հասնիս Բիւրապատիկին քով,- կը խնդրէ պարտիզպանը,- հարցուր իրեն, թէ ինչո՞ւ երբ պարտէզիս չորս կողմը պատ պատեմ բոլոր պտուղները եւ կանաչութիւնները կը չորնան, պատը որ քանդեմ՝ կը կանաչնան:

- Գլխո՛ւս վրայ, կ'ըսէ մարդը եւ կը շարունակէ ճամբան:

Օրեր քալելէ





Մարդը վերջապէս կը հասնի տուն, կնկան կը պատմէ եղածը եւ միասին կը սկսին փորել թուփի ծառին տակը, կը գտնեն կարասը, բայց արդէն իրիկուն եղած էր, մնացած գործը կը ձգեն յաջորդ օրուան: Կարասին լուրը կը հասնի դրացիներուն, գիշերը կու գան, կը բանան կարասը, կը տեսնեն, որ մէջը դեղին հող լեցուն է, կարասը կ'իյնայ պարտէզին մէջ եւ կը կոտորի:

Առտու մարդը եւ կինը կը տեսնեն որ պարտէզին չորս կողմը ոսկիրով ծածկուած է, կը հաւաքեն ոսկիները, կը հարըստանան եւ փառք կու տան Աստուծոյ:

Այս պատմութիւնը կը փոխանցէ կարելոր դաս մը, թէ երբ մարդ լաւութիւն ընէ՝ Աստուած գայն կը վարձատրէ:

Ի՞նչ կը ՓԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ

ՊԱՏՄԱԲԱՆ



Պատմաբանը կը վերլուծէ եւ կը քննարկէ անցեալին պատահած դէպքերը: Ան կ'աշխատի բացատրել եւ պարզել այդ դէպքերուն պատճառները եւ հետեւանքները:


Պատմաբանին աշխատանքը կը կեդրոնանայ արխիւներու, ձեռագիր մատեաններու, պաշտօնական նամակներու, այլեւայլ գրաւոր աղբիւրներու եւ յաճախ՝ պեղումներու արդիւնքներու վրայ:

Պատմաբանը պէտք է շատ յստակ բացատրէ եւ ներկայացնէ դէպքերը պատմութեան մը պէս, սակայն իր վերլուծումները պէտք է հեռու մնան ենթակայական մօտեցումէ եւ անձնական նախասիրութիւններէ:

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

ԾԱՌԵՐՈՒՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Ծառերը մեծ օգտակարութիւն ունին մարդուն եւ կենսոլորտին վրայ:



1. Ծառերը կը մաքրեն օդը: Անոնք կը շնչեն փորոկածին եւ կու տան թրթուածին: Այսպէսով ծառերը կը մաքրեն օդին մէջ եղած փոշին եւ մաքուր կը պահեն կենսոլորտը: Մեծ քաղաքներու մէջ պէտք է ցանել մեծ թիւով ծառեր, որպէսզի առաջըր առնուի ինքնաշարժներու եւ գործարաններու ապականումին:

2. Ծառերու տերեւները շուք տալով կը գովացնեն օդը եւ մեզ կը պահպանեն արեւուն կիզիչ ճառագայթներէն: Այսպէսով, ամրան տաքուն կրնանք գովանալ ծառերու շուքին տակ ու անցրնել հաճելի պահեր:

3. Ծառերով շրջապատուած վայր մը կը հանգրստացնէ մարդուն միտքը, աչքը, ջիղերը ու

գայն ուրախ մթնոլորտի մէջ կը պահէ:

4. Անտառները լաւագոյն վայրերն են մարզանքի եւ բանակումներու համար, որովհետեւ հոն կըրնանք հանգստացնել մեր միտքը եւ գորացրնել մեր մարմինները:

5. Պողոտաներու մէջտեղը գտնուող ծառերը կ'արգիլեն հակառակ ուղղութեանէն եկող ինքնաշարժներուն լոյսի անցքը, նուազեցնելով ինքնաշարժներու արկածները:

Այսպէս, ծառերը բազմաթիւ օգտակարութիւններ ունին եւ ո՛չ մէկ վնաս: Ուրեմն, կ'արժէ պահպանել մեր շուրջը գտնուող ծառերը:





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ...

Շարունակուած՝ 29րդ էջէն

Իր խօսքին աւարտին, եղբ. Տէր Սարգիսեան դիտել տուաւ, որ 25ամեայ երթին ընթացքին «Մարզիկ» զարգացում ապրած է, բարգաւաճած եւ քայլ պահած է օրուան պահանջներուն հետ՝ կառչած մնալով իր նպատակներուն: «Մարզիկ»-ի 25 տարիներու կեանքին մէջ իրենց ներդրումը ունեցած անձերուն գնահատանքի խօսք ուղղել է ետք, եղբայրը բարի երթ եւ յաջողութիւն մաղթեց «Մարզիկ»ին:

Այս առիթով ցուցադրուեցաւ «Մար-

զիկ»ի կողմէ պատրաստուած 25ամեակի Տի.Վի.Տի.ն:

Հուսկ, խօսք առաւ Սուրէն Արք. Գաթարոյեան, որ կոչ ուղղեց համախմբուելու եւ ամուր կառչած մնալու Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարներուն: Այս առիթով ան յիշեց սկառուական յուշեր եւ փոխանցեց իր թելադրանքները: Հ.Մ.Ը.Մ.ի դերը դրուատելով, ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը տարիներ տիրական ներկայութիւն դարձաւ մեր ժողովուրդին

կեանքին մէջ, Մ. Նահանգներէն Եւրոպա, Միջին Արեւելքէն Աւստրալիա: Այսօր, ազատ անկախ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կայ, կ'ապրի: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ հայր իր ինքնուրոյն դիմագիծով ինքզինք կերտեց եւ դարձաւ հայութեան հաւատարիմ գինուորը:

Տօնակատարութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգին յորդնկայս խմբերգումով եւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով:

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիէ ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջայեր անդամ»ներու դրութիւնը: Թերթին «Քաջայեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջայեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջայեր անդամներ են»-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուհի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլիէան, Յակոբ Թոքաթեան, Վապգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆՍԱՅԷՆ Կարապետ Ն. Թովմեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորձ Տաթեւեան:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Ամերիկացի թեմիսվումբն:
2. Ճարտարութիւն - Պարատեսակ:
3. Փքին - Ափրիկեան երկիր - Ներքեւ (հակ.):
4. Յուցական դերանուն - Չայրացկոտ:
5. Մեղմէս, խաբեբայ:
6. Ալբուրեւնէն - Եգիպտական աստուած - Հարա-
ւային Ամերիկայի ոստաններէն:
7. Խղճալի, արգահատելի - Աչք ունեցող:
8. Տերեփուկ- Չայնանիչ - Հայկական ամիսներու ԺՁ. օրը:
9. Փոքրացնող մասնիկ - Լծորդութիւն - Հայրենի
երգիչ:
10. Խուպոտ, հաստ ձայն - Պտուղի աղուամագ:
11. Կրկնուած բաղաձայններ - Իտալացի ֆուլթպո-
լիստ՝ Չաքարոս:
12. Իտալական գետ - Ինքս - Ստացական ածական -
Ցաւի ճիչ:
13. Տառի մը անունը - Փխրաքար - Իգական օտար
անուն:
14. Կոճղիզաւոր համեմաբոյս - Դրդող:
15. Տրոպիկայի պատերազմին մասնակցած հայ
նահապետը:
16. Գահաւորակ - 18 Մոնտիայներու լաւագոյն
կոլսորբը:
17. Ամագուն - Խօսիլ - Կրկնուած բաղաձայններ:
18. Էական բայ - Լուռ - Կախարդական:
19. Դրկից գիրեր - Ճագար - Արական օտար
անուն:
20. Երկարավիզ ջրաման - Խնդածաղիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Էն. Պի. էյ.ի 2005ի ախոյեան կազմը - Պտուղ:
2. Դէմք - Անուր - Սրտուկ - Դրախտ:
3. Վատատոհմիկ - Երկուշաբթի - Յեսանել, Կողմ:
4. Շողկապ - Ոսկիի աստիճան - Երկտող - Նշմարէ՛:
5. Սրդողիլ - Չարայուշ, քինաթաբոյց:
6. Եպիսկոպոսական գաւազան - Թել մանելու ձեռային գործիք - Շողկապ - 301 - Լիբա-
նանի գետերէն:
7. Ոտնատեղի - Մանչեսթրը Եոլնայթրտի մարզիչը:
8. Ծառի կոճղ - Կրկնուած բաղաձայններ:
9. Գլխու սանտրուած մագի բաժանումի գիծ - Ռոմի Շնայտրրի ֆիլմերէն - Արական օտար
անուն - Գրաւ:
10. Շան ձագ - Անձնական դերանուն - Գայարուն:
11. Գլուխը կախ՝ սպանացի գեղանկարիչ - Ֆրանսացի բանաստեղծ (1790-1869) - Ֆրանսա-
կան գետ - Հօտ:
12. Համեմատ - Արական անուն - Իսլամ կրօնաւոր - Դիւրաբեկ եւ թափանցիկ նիւթ:
13. Կեդրոնական Ամերիկայի երկիրներէն - Ուղարկել:
14. Անհասկնալի, անըմբռնելի - Խրճիթ:
15. Որովհետեւ - Դէ՛հ - Գաւաթեւ - Վազգէն Շուշանեանի մկրտութեան անունը:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
1
20

ԹԻԻ 156 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՑՈՒՄԸ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1	Թ	Ի	Մ	Օ	Հ	Ի	Լ	Տ	Չ	Պ	Ե	Ն	Տ	
2	Ռ	Ր	Ո	Մ		Ե	Ո	Ր	Չ	Ո	Ր			
3	Ր	Ա	Խ		Ե	Ս	Պ	Ե	Տ					
4	Ո	Ի	Ր	Ջ	Ո	Ի								
5	Ն		Ա	Լ		Կ								
6	Թ	Ա	Մ	Ա	Ր					Պ	Տ	Պ		Կ
7	Օ	Մ	Ա	Ն	Գ					Ե	Տ	Ի	Ր	Է
8	Ռ	Ո	Ն	Մ	Ա	Ր	Ա	Ր	Ա	Ս	Թ	Ս	Պ	Տ
9	Ե	Լ								Ն	Ա		Գ	Թ
10	Փ						Ի	Ր	Ա	Ր	Պ	Ց	Յ	Ա
11	Ք	Օ						Ք	Ե	Մ	Ս	Ձ	Հ	Ե
12	Շ	Թ								Ե	Մ	Ա	Ս	Ա
13	Ր	Ե	Ն				Փ	Լ	Ա	Տ	Ա	Կ		Ի
14	Ջ	Լ	Ա	Ն	Ա	Լ				Կ	Ա	Գ		Ա
15	Լ	Խ		Մ	Օ	Մ				Ե	Լ	Ա		Կ
16	Կ	Օ	Ր	Ա	Ք		Գ			Ա	Ս	Պ	Ց	Յ
17	Պ	Ա	Տ	Ա	Ն	Ա				Ա	Ս	Ա	Ս	Ա
18	Ա	Ս	Պ	Ա	Ն	Ա	Ց			Ա	Տ	Ր	Ի	Ա
19	Ա	Ր	Ա	Լ	Ք					Ա	Տ	Ի	Ա	Ս
20	Ն	Ա	Ն	Ի	Ր		Ձ	Ի	Տ	Ա	Ր	Ա	Ր	Ա

Հ.Ս.Ը.Ս.Ի ԸՆԹՈՒԼԻԿՄԻ ՊԱՐԵԵԹՎՈՒԼԻ ԱՂՋԿԱՆՆՑ ԽՈՒՍՔԸ

